Azg Ազգ

8 ՅՈՒՆԻՍ 2011 ՇԱԲԱԹ 104(4723)

ISSN: 1829-1651

Ի՞նչ է նշանակում «ԼՂ միջանկյալ կարգավիճակ» եւ որտե՞ղ պետք է անցկացվի հանրաքվեն

Պարզաբանել է Անջել Կասպրշիկը

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ Իգոր Պոպովը, Բեռնար Ֆասիեն եւ Ռոբերտ Բրադկեն, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրշիկը տարածաշրջանում են: Հունիսի 6-ին, ինչպես «**Ազգն**» արդեն տեղեկացրել է, նրանք Բաքվում հանդիպեցին արտգործնախարար Մամեդյարովին եւ նախագահ Ալիեւին: Այնուհետեւ համանախագահները այցելել են Ստեփանակերտ, իսկ հունիսի 9-ին նրանց սպասում են Երեւանում: Ինչպես ադրբեջանական 1news.az-ին ասել է արտգործնախարար Մամեդյարովը՝ «Մինսկի խմբի համանախագահները չեն բերել նոր մտահղացումներ, կամ առաջարկներ: Նրանք շարունակում են աշխատել արդեն հայտնի սկզբունքների շուրջը»: Ադրբեջանի ԱԳ նախարարը մանրամասնել է. «Գոյություն ունեն 6 սկզբունքներ, որոնք որոշվել են «Մեծ ությակի»՝ Կանադայում կայացած գագաթաժողովի ժամանակ: Հենց այդ սկզբունքներով մենք շարունակում ենք աշխատել: Դրանցից առաջինը օկուպացված տարածքների ազատումն է: Սկզբունքորեն հայերը համաձայն են այս դրույթին, փոխարենը պահանջում են Լեռնային Ղարաբաղում կամարտահայության անցկացման հստակ ժամկետների նշում: Հայերը մշտապես պահանջում են դիպուկահարներին հանել առաջին գծից, սակայն այնտեղից պետք է հանել զորքերը, այլ ոչ թե դիպուկահարներին», նշել է Մամեդյարովը:

Ադրբեջանի ԱԳ նախարարը, անդրադառնալով «խաղաղապահ ուժերի ներկայացմանը», նշել է, որ «դրանց կազմն արդեն իսկ փոխադարձ համաձայնեցված է». «Այդ ուժերը կազմված են լինելու համանախագահների (հավանաբար՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի՞ համանախագահների- Հ.Ա.) ուժերից, այլ ոչ թե հարեւան երկրների ուժերից»: Մամեդյարովը հավելել է. «Այս բոլոր հարցերը դեռ պահանջում են հավելյալ քննարկումներ»:

Ադրբեջանի արտգործնախարարի այս հայտարարությունները՝ հունիսի 11-ին Մոսկվայում կայանալիք Նալբանդյան-Լավրով-Մամեդյարով հանդիպումից եւ հունիսի 25-26-ին Կազանում կայանալիք Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւի հանդիպումից առաջ, որից մի շարք փորձագետներ լուրջ ակնկալիքներ ունեն, բավական հետաքրքրական են: Մասնավորապես՝ Մամեդյարովը նախկինում երբեք չի արտասանել «Լեռնային Ղարաբաղում կամարտահայություն» տերմինը:

Տես էջ 3

Մինսկի խմբի համանախագահները Ստեփանակերտում են

Հունիսի 7-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի պլանային դիտարկում է անցկացրել Ակնա-Բարդա ուղղությամբ: ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի (ԳՆԱՆ) դաշտային օգնականներ Անթալ Հերդիչը (Հունգարիա) եւ Խրիստո Խրիստովը (Բուլղարիա): Հակառակ կողմից դիտարկումը կատարել են ԵԱՀԿ գրասենյակի համակարգող Իմրե Պալատինուսը (Հունգարիա) եւ ԳՆԱՆ դաշտային օգնական Մարիուս Պուռնիուանսը (Լիտվա): Դիտարկման ժամանակ աշխատանքային այցով տարածաշրջան ժամանած ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ), Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) եւ Իգոր Պոպովը (Ռուսաստան) հատել են շփման գիծը նախապես ակնազերծված հատվածով: Դիտարկումն անցել է ըստ նախատեսված ժամանակացույցի, կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել: Դիտարկման առաքելությանը ղարաբաղյան կողմից ուղեկցել են ԼՂՀ արտաքին գործերի նախարարության եւ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

Այս մասին տեղեկացնում են ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունից: Այսօր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագող եռյակին կընդունի ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

Հունիսի 10-ին կսկսվի Ամենայն հայոց կաթողիկոսի այցը Վրաստան

Հունիսի 10-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը միջեկեղեցական եւ հովվապետական վեցօրյա այցով կմեկնի Վրաստան՝ Վրաց ուղղափառ եկեղեցու Իլյա Բ կաթողիկոս-պատրիարքի եւ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի հրավերով:

Այցի շրջանակներում Ամենայն հայոց հայրապետը հանդիպումներ կունենա Վրաց ուղղափառ եկեղեցու Իլյա Բ կաթողիկոս-պատրիարքի, Վրաստանի Հանրապետության նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի, ինչպես նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագետների, կրոնական համայնքների առաջնորդների, վրաց եւ հայ մտավորականության հետ:

Հունիսի 12-ին Նորին Սրբության ձեռամբ կվերաօծվի Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցին: Հունիսի 13-15-ը Վեհափառ հայրապետը, ուղեկցությամբ վրաց պատրիարքի, Թբիլիսիից կմեկնի Ջավախք, ուր կայցելի Ախալցխա, Ախալքալաք, Գանձա, Ասպինձայի, Նինոծմինդայի եւ Ծալկայի շրջկենտրոններ՝ հայրապետական իր օրհնությունը բաշխելու տեղաբնակ հայորդիներին:

Ամենայն հայոց կաթողիկոսին այցի ընթացքում ուղեկցելու են Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր Շահե աբեղա Անանյանը՝ որպես գավազանակիր, տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը, կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Ադամ քահանա Մակարյանը, դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը եւ դոկտոր Դավիթ Մուրադյանը:

Ադրբեջանը՝ ռասիստական գաղափարների կրող

Դավադիրներ, ոխերիմ թշնամի, վիժաբուներ, նախանձներ եւ մարդասպաններ: Հայի կերպարն այսպես է ներկայացված Ադրբեջանի դասագրքերում, ֆիլմերում ու հաղորդումներում:

Եվրոպական հանձնաժողովի ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ զեկույցում կրկին անդրադարձել են Ադրբեջանին: 5 տարի պարբերականությամբ հրապարակվող զեկույցն արդեն երրորդ անգամ է անդրադառնում Ադրբեջանում առկա խնդիրներին՝ կապված ազգային փոքրամասնությունների հետ:

Այս տարի 50-էջանոց զեկույցում հանձնաժողովի մասնագետները մանրամասն ուսումնասիրել են ադրբեջանական ՋԼՄ-ները, դասագրքերը, տարածվող բուկլետները, գովազդները՝ պարզելու երկրի վերաբերմունքը հարեւանների եւ հատկապես տարածքային խնդիրներ ունեցող Հայաստանի հետ:

Զեկույցում հատկապես ընդգծվել է ադրբեջանական հասարակությունում հայի կերպարի ներկայացումը: Հայերը բացառապես ներկայացվում են բացասական լույսի ներքո:

«Կողմերը գտնվում են հակամարտությունը բանակցային ճանապարհով լուծելու ճանապարհին, սակայն խաղաղ գործընթաց որպես այդպիսին չկա, որովհետեւ մի կողմը իր հասարակությունում բացահայտ թշնամանք է սերմանում մյուս երկրի հանդեպ: Հետեւաբար անհնար է ակնկալել հասարակությունների միջեւ երկխոսություն կամ հանդուրժողականություն»:

Պատմության դասագրքերում հայեր ներկայացված են բացասական կերպարով: Թուրքագետ Վարուժան Գեղամյանը մեջբերում է 11-րդ դասարանի Ադրբեջանի նորագույն պատմության դասագրքից հատվածը, որտեղ ներկայացվում է ադրբեջանցի գեներալ Ալի Ասլանովին: Պատմաբանը գրում է, որ «պատերազմի ժամանակ, երբ արդեն ադրբեջանական բանակը մոտ էր հաղթանակին, հանկարծ անհետանում է Ալի Ասլանովը: Ո՞վ գիտի, գուցե նրա անհետացման հանգամանքները ճշտելիս գտնենք նախանձ եւ դավադիր հայերի հետքը»:

Զեկույցի հեղինակները մտահոգություն են հայտնում, որ Ադրբեջանում տարեցտարի շատանում են ռասիստական գաղափարներ կրողները: Նրանք ներկայացնում են մեկ օրինակ. «հայ» ու «թշնամի» բառերը հոմանիշներ են:

Հետեւաբար զարմանալի չէ, որ այս երկրում ծնվում են ռամիլսաֆարովներ, իսկ երկրի նախագահ Ալիեւը մարդասպանին դարձնում է հերոս, նրա անունով փողոց ու հրապարակ անվանում: Ադրբեջանցիներն էլ իրենց զավակներին անվանում էին ռամիլ կամ ռամիլա, ի պատիվ վախկոտ մարդասպանի:

Վերոնշյալ հանձնաժողովը երբեւէ զեկույց չի ներկայացրել Հայաստանում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, սակայն 2009-ին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հովանավորությամբ կատարվեց հետազոտություն՝ պարզելու, թե նախկին խորհրդային Միության երկրների պատմության դասագրքերում ինչպես են ներկայացվում տվյալ երկրի պատմությունն ու հարաբերությունները հարեւանների հետ: Ամենակոռադասվածը եւ ոչ նացիստականը համարվեցին Հայաստանի ու Բելառուսի պատմության դասագրքերը:

Եվրոպական հանձնաժողովի ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ զեկույցը որեւէ հետեւանք չի կարող ունենալ: Այն ընդամենը կարող է խորհուրդ տալ, հորդորել, առաջարկել, որ Ադրբեջանը փոխի իր քաղաքականությունը:

Հ. Հ.

Եթե հարկ լինի, «Երկիրը» կդիմի Եվրոպական դատարան

Այսօր Երեւանի Կենտրոն ու Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում հրապարակվելու է ԱԺ պատգամավոր Տիգրան Արզաֆանցյանի՝ «Երկիր» օրաթերթի դեմ հայցով դատավճիռը: Հիշեցնենք, որ պատգամավորը դատի է տվել «Երկիր» օրաթերթին «131 դեմք ու դիմակ» խորագրի ներքո հրապարակված մի շարք արտահայտությունների համար, որոնք, ըստ պատգամավորի, վիրավորում են իր պատիվն ու արժանապատվությունը:

Դատավճռի նախաբեմին՝ երեկ, օրաթերթի գլխավոր խմբագիր Բագրատ Եսայանն ու փաստաբան Լիանա Գրիգորյանն ասուլիս տվեցին: Խմբագիրը հայտարարեց, որ իրենք չեն հանձնվելու. «Գնալու ենք մինչեւ վերջ: Եթե Հայաստանի դատական համակարգն իրեն սպառի, կդիմենք Եվրոպական դատարան»: Իսկ փաստաբանը հույս հայտնեց, որ վճիռն արդարացի կլինի, քանի որ հայցվոր կողմի ներկայացրած փաստերի դեմ բերվել են արդարացի հակափաստարկներ:

Ի. Պ.

Մերժվեց «Հետքի» լրագրողի հայցն ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի

Ավան եւ Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը երեկ մերժել է «Հետք» թերթի լրագրող Գրիշա Բալասանյանի հայցն ընդդեմ Ազգային ժողովի ՀՀԿ-ական պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի, որով լրագրողը պահանջում էր, որ պատգամավորը ներողություն խնդրի պատճառած վիրավորանքի համար՝ փոխհատուցելով 1 մլն դրամ եւ վճարելով դատական ծախսերը: Գ. Բալասանյանը պատրաստվում է վճիռը բողոքարկել:

Մ. Խ.

Հրաժեշտ Յովանովիչին

Երեկ առաքելությունն ավարտող ԱՄՆ-ի դեսպան Մարի Յովանովիչին ընդունել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, որը բարձր է գնահատել դեսպանի անձնական ավանդը Հայաստանի եւ Միացյալ Նահանգների բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում. «Վաշինգտոն իմ այցելության ընթացքում նշվեց, որ հայ-ամերիկյան հարաբերությունները բարձրացել են որակապես նոր մակարդակի, եւ այդ գործում մեծ է Ձեր ներդումը»: Յովանովիչը շնորհակալություն է հայտնել ջերմ խոսքերի եւ Հայաստանում աշխատելու ընթացքում աջակցության եւ արդյունավետ համագործակցության համար՝ նշելով, թե իր համար հաճելի է եղել աշխատելը Հայաստանում:

Մ. Խ.

Հրայր Թովմասյանը՝ ՀԱԿ-ին. «Արտահերթ խորհրդարանական ընտրություն անցկացնելու իրավական ճանապարհ գոյություն չունի»

«Դասական իշխանությունների անկախությունը բավարար եմ համարում: Այդ անկախությունը պետք է յուրաքանչյուր դասավորի մեջ լինի: Եթե չկա, ապա բացակայությունը սահմանադրության խնդիրը չէ», այսպես սկսեց «Սիվիլիթաս» հիմնադրամում հանդիպումը արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը: Նրա մեկնաբանությամբ՝ արդարադատության հասարակական պահանջ պետք է լինի, եթե այդ բանաձեւը ձեւակերպվի, ապա ավելի հեշտ ու արագ կլինի նպատակին հասնել:

Եթե Թովմասյանը նորից կազմելու լիներ սահմանադրության բարեփոխման նախագիծը, ապա խմբագրական որոշ շտկումներից բացի նոր բան չէր ավելացնի: «Սահմանադրությունը շղթայի մի օղակն է, որին պետք է հետեւին այլ քայլեր, որոնց մի մասն այսօր դանդաղում է»:

Նախարարը ներկայացնում է ուսանողական վերջին սոցհարցման արդյունքները, համաձայն որոնց՝ քաղաքացիների 84%-ը պատրաստ է անօրինական խնդիրը կաշառքի միջոցով լուծել, իսկ 63%-ը պատրաստակամություն է հայտնել դատական իշխանություններին կաշառք տալ անգամ այն պարագայում, եթե ինքը գործում է օրենքի սահմաններում: Թովմասյանի գնահատմամբ՝ որքան էլ սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարեն կամ օրենքները կատարելագործվեն, գլխավոր խնդիրն է՝ պայքարել հասարակական այս զանգվածային մտածելակերպի դեմ:

Անդրադառնալով քրեական-արդարադատական հիմնարկում տիրող սարսափելի իրավիճակին՝ նախարարը շեշտեց. «Այսօր ՔԿՀ-ներում նաեւ հանցագործ ենք արտադրում: Գիտե, որ նախարարը չպետք է նման բան ասի, բայց ասում եմ...»: Նախարարը դա բացատրում է այն հանգամանքով, որ ՔԿՀ-ներում բանտարկյալները ոչնչով չեն զբաղվում, այնտեղից դուրս գալիս ունենում են խնդիրներ ընտանիքի անդամների հետ, հասարակության մեջ չեն կարողանում իրենց տեղը գտնել, որովհետեւ կրում են «նստած-ելածի» դրոշմն ու աշխատանք չգտնելու պարագայում կրկին վերադառնում են կալանավայր:

Նախարարի գնահատմամբ՝ անհրաժեշտ է փոխել քրեակատարողական հիմնարկների փիլիսոփայությունը: Թովմասյանը ցանկանում է ՔԿՀ-ների խնդրի համակարգային լուծում գտնել՝ չխնայելով նախորդ նախարարներին:

«Ասում են՝ նոր ավելը շատ փոշի է հանում: Պետք է հասկանալ խնդիրները ու լուծում գտնել: Ստեղծել այնպիսի համակարգ, որը որ նախարարն էլ գա, չի կարողանալու փոխել»: Թովմասյանը հակված չէ խնդիրների կարճաժամկետ լուծման եւ հեռահար նպատակների իրագործման կողմնակից է: Հենց դա է պատճառը, որ ՔԿՀ-ներում պայմանների բարելավման համար բյուջեի միջոցները ծախսելու փոխարեն Արմավիրում նոր ՔԿՀ-ի կառուցում է նախաձեռնել:

Իրավական տեսանկյունից մեկնաբանելով Հայ ազգային կոնգրեսի պահանջը՝ անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ, նախարարն ընդգծեց, որ այսօր խորհրդարանի լուծարման բացարձակ իրավունք գոյություն չունի:

«Արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու իրավական ճանապարհ այսօր գոյություն չունի: Եթե նախկինում նախագահը կարող էր անգամ քաղաքական նկատառումներից ելնելով լուծարել խորհրդարանը, ապա 2005թ. ընդունված սահմանադրությամբ հստակ սահմանված են այն հիմքերը, երբ կարող է լուծարվել խորհրդարանը: Ուստի խորհուրդ կտայի մինչեւ պահանջ դնելը նայել, թե որքանով են դրանք սահմանադրությունից բխում»:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կարեն Կարապետյանը արտահերթ ընտրությունների եւ երկխոսության ձեւաչափի ՀԱԿ առաջարկներն ինքնանպատակ է համարում

Պատասխանելով «Նովոստի-Արմենիա» գործակալության հարցին՝ «Ի վերջո, իշխանությունն ընդունո՞ւմ է երկխոսություն սկսելու Հայ ազգային կոնգրեսի առաջարկը եւ պատրաստվո՞ւմ է արդյոք համապատասխան պատվիրակություն ձեւավորել, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանը երեկ պատասխանել է. «Դժվար չէ նկատել, որ այդ երկխոսությունը վաղուց է սկսվել, բավականին արդյունավետ ընթանում է ու մի շարք դրական փոփոխությունների արդեն իսկ հանգեցրել է: Դա պարզապես այնքան ակնհայտ է, որ երկխոսություն սկսելու մասին խոսելն առնվազն տարակուսելի է: Ինչ վերաբերում է պատվիրակություն ձեւավորելու եւ արտահերթ ընտրությունների շուրջը բանակցելու առաջարկին, ապա այստեղ թե՛ առաջարկվող ձեւաչափը, թե՛ դրվող հարցը մեծ հաշվով ուղղակի ինքնանպատակ են, եւ, ինչպես դժվար չէր կռահել, անընդունելի: Իսկ «պատվիրակությունների բանակցություններ» արտահայտությունն այնպես ուռճացված ու գունազարդված է ներկայացվում, կարծես խոսքը վերաբերում է միջպետական բանակցություններին եւ ոչ թե իշխանություն-ընդդիմություն գործակցությանը, որի իրականացման՝ աշխարհում տարածված մեխանիզմները մեր երկրում կան, որոնց վերջին տարիների ընթացքում ավելացել են նաեւ ՀՀ նախագահի առաջ քաշած նոր ձեւաչափերը: Կարծում եմ՝ մեր երկրում առկա բազմաթիվ խնդիրների վերաբերյալ հասցեական քննարկումների ու մոտեցումների ճշգրտմանն ուղղված գործելաոճն է միայն, որ կարող է դրական եւ ընդունելի արդյունքների հանգեցնել մեր ժողովրդի համար:

Մենք շարունակում ենք հանուն Հայաստանի առաջընթաց զարգացման՝ բոլոր քաղաքական ուժերի հետ համագործակցելու մեր ջանքերը, կարեւորելով հնարավոր արտաքին սպառնալիքներին համախմբված դիմակայելու անհրաժեշտությունը, երկրում համակարգային փոփոխությունների շարունակականությունը, դրանց նոր ազդակ հաղորդելն ու շոշափելի արդյունքներ երաշխավորելը: Այս տեսանկյունից կոալիցիոն կուսակցությունները պատրաստակամ են արդյունավետ աշխատելու բոլոր քաղաքական ուժերի, այդ թվում եւ Հայ ազգային կոնգրեսի հետ՝ գործադիր իշխանության կառույցներում եւ Ազգային ժողովում հանդես գալով ՀԱԿ-ի բոլոր իրականալի եւ «հանուն» առաջարկներն առաջ տանողի դերում», ասել է Կարեն Կարապետյանը:

Կ. Կարապետյանի այս պարզաբանումը, որը հետեւեց ՀԱԿ-ի տերմինաբանությանն ու պատվիրակություն ստեղծելով՝ իշխանություններին սկսվող երկխոսության ՀԱԿ-ական սցենարի պարտադրմանը, կարելի է ՀԱԿ-ին իր տեղը ցույց տալու փորձ անվանել: Ջենք զարմանա, եթե այսօր-վաղը հետեւի նախագահ Սարգսյանի արձագանքը նույն ոգով եւ մի բան էլ ավելի: «Դեսպի մաս», ինչպես արդեն հնչել են տարբեր մեկնաբանություններ:

Այստեղ են ասել՝ ախր ջուրը չտեսած՝ ո՞ւր էիր բոբիկանում, այ ՀԱԿ:

Մ. Խ.

Քարեւ եւ գետություն

ՀԱԿ-ի մաս կազմող ՍԴՀԿ ատենադպիր Լյուդմիլա Սարգսյանը երեկ իր փխրուն ուսերի վրա առավ ԱՄՆ դեսպան Յովանովիչի մասնակցությամբ երկխոսող պատվիրակության կազմ ընտրելու մասին մամուլային լուրերի հերքումը: ՀԱԿ-ի անունից նա ասում էր, թե կազմը համաձայնեցված է եղել ՀԱԿ-ի անդամ բոլոր կուսակցությունների հետ, նրանց ղեկավարների հետ բանակցություններ են վարվել՝ որեւէ երկրի դեսպան դերակատար չէր կարող լինել: Բայց ՍԴՀԿ տիկինն այսքանով չի բավարարվել եւ դիվանագետ տիկնոջը շնորհակալությունների մի շարք է ուղղել այն բանի համար, որ նա օգնել է Հայաստանի քաղաքացիական հասարակության ձեւավորմանը՝ ԱՄՆ-ի քաղաքականությանը համահունչ, եւ որ նպաստել է ՀԱԿ-իշխանություն երկխոսությանը եւ բազմաթիվ այլ շնորհակալություններ: Դե, զարմանալու ֆիչ բաներ չկան մեր երկրում, մեկն էլ այն է, որ ԱՄՆ-ի դեսպանին, իր առաքելությունն ավարտելիս ով ասես կարող է հրապարակավ ֆնեղ, այդ թվում՝ ընդդիմադիր ֆորմատի մաս կազմող փոքր կուսակցության ղեկավար: Կարծեմ դեսպաններին իրենց առաքելությունն ավարտելիս երկրի անունից շնորհակալություն են հայտնում երկրի ղեկավարները, ինչն արվել է, էլ էդ միկրոսկոպիկ շնորհակալություններն ում են պետք. մի ֆուրշեթի ժամանակ մոտենայիք (օրինակ՝ երեկ, ԱՄՆ-ի անկախությանը նվիրված ընդունելության ընթացքում), դիվանագետ տիկնոջ ականջին անձնատես Ձեր շնորհակալությունը հայտնեիք-պրծնեիք:

Մ. Խ.

Orange Արմենիան միանում է IPv6 ինտերնետ արձանագրության Համաշխարհային օրվան

Orange Արմենիան միանում է Internet Society կազմակերպության նախաձեռնությանը՝ հունիսի 8-ին մասնակցելու եւ եւ աջակցելու IPv6 արձանագրության Համաշխարհային օրվան: Սկսած հունիսի 8-ից՝ ընկերության պատշգամբային կայքը՝ www.orangearmenia.am, հասանելի կլինի ինչպես IPv4, այնպես էլ IPv6 արձանագրությունների միջոցով (IP ինտերնետ արձանագրություն):

IPv6 արձանագրության ներդրումն էական նշանակություն ունի ինտերնետի արդյունավետ զարգացման համար: Այսօր, երբ ինտերնետին միանալու համար նախատեսված յուրաքանչյուր սարքավորում (համակարգիչ, բջջային հեռախոս, պլանշետ եւ այլն) հիմնված է եզակի IP հասցեի վրա, ինտերնետ միացման համար անհրաժեշտ են ավելի շատ IP հասցեներ:

Ներկայումս օգտագործվող IPv4 արձանագրությունն օգտագործում է IP հասցեների 32-բիթանոց ձեւաչափ կամ, այլ կերպ ասած, տրամադրում է 4.29 միլիարդ եզակի IP հասցեներ: 2011թ. փետրվարին IPv4 բոլոր հասցեները սպառվեցին: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջ եկել մշակել նոր IPv6 ինտերնետ արձանագրություն, որն օգտագործում է IP հասցեների 128-բիթանոց ձեւաչափ եւ հնարավոր է դարձնում սանալ ավելի շատ IP հասցեներ եւ ինտերնետին միացնել ավելի մեծ թվով սարքավորումներ:

Լինելով 3G+ ցանցի միջոցով շարժական ինտերնետի ծառայություններ մատուցող օպերատոր՝ Orange Արմենիան միանում է SS ոլորտի համար այս կարեւոր իրադարձությանը եւ համաշխարհային հանրության հետ միասին իրականացնում նոր ինտերնետ արձանագրության փորձարկում:

Հաջորդ փուլի համար Orange-ը նախատեսում է իրականացնել իր ցանցի փորձարկում եւ վերազինում, որպեսզի հետագայում հնարավոր լինի ապահովել անարգել անցումը նոր IPv6 ինտերնետ արձանագրությանը:

Ցավակցություն

Երեւանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի ռեկտոր Օհանես Թոմնաջյանի ընկերները ցավակցում են նրան հորքրոջ որդու՝ **Պավել Գրիգորյանի** մահվան կապակցությամբ:

ՀԱԿ-ը սպասում է Սերժ Սարգսյանի պատասխանին

Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանի՝ երկխոսության վերաբերյալ ՀԱԿ առաջարկների արձագանքին երեկ արձագանքել է ՀԱԿ մամուլի խոսնակ Արման Մուսինյանը, թե՝ ի դեմս Սերժ Սարգսյանի են սպասում գործող իշխանության պատասխանին: Մնացյալ կարծիքները ՀԱԿ-ին չեն հետաքրքրում:

Մ. Խ.

Ինտերնետ եւ անվճար հակավիրուսային ծրագիր «Վիվասել ՄՏՍ»-ից

Ինչպես տեղեկացանք «Վիվասել ՄՏՍ»-ից, այսուհետեւ «ՄՏՍ կոնեկտ» սակագնային պլաններից որեւէ մեկի կամ 3G երթուղիչի հիման վրա գործող որեւէ փաթեթի բաժանորդները, գերադաս ինտերնետի հետ կապանան նաեւ համակարգչի համալիր պաշտպանություն: Հունիսի 2-ից օգոստոսի 31-ը բաժանորդագրվելով նշված փաթեթներից որեւէ մեկին՝ բաժանորդները հնարավորություն կունենան անվճար օգտվելու հանրահայտ Dr.Web լիցենզիոն հակավիրուսային ծրագրից:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ Մեկնաբան

Նենգափոխման անատոմիա

Մի փոքր տարօրինակ է, որ Իլհամ Ալիեւի աշխատակազմում արտաքին հաղաքականության հարցերի պատասխանատու Նովրուզ Մամեդովը Ղարաբաղյան կարգավորման բանակցությունների նուրբ թեմայով տեսակետներ է հնչեցնում Twitter սոցիալական ցանցի միջոցով: Տպավորությունն այն է, թե արտաքին հաղաքականությունը նրա համար «պարապ վախտի խաղալիք » է: Կամ էլ «շեֆն» այնքան է զբաղված զանազան հիմնարկեթի արարողություններով, որ այդ «պատվավոր գործը» վերապահել է նրան:

Հունիսի 6-ին Իլհամ Ալիեւն ընդունել է ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին: Դրան հետեւել է Twitter-ում Նովրուզ Մամեդովի սույն գրառումը. «Միջազգային հանրությունը եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները պահանջում են սատուս քվոյի փոփոխությունը: Մենք ուզում ենք, որ սկսվի որոշակի շրջանների ազատման գործընթաց եւ այնտեղ վերաբնակեցվեն ադրբեջանական փախստականները: Հայկական կողմը պետք է քաջություն գտնի եւ վերաբերմունք արտահայտի այդ սպասումների հանդեպ: Կազանում նախագահների հանդիպման արդյունքում կարող է ստորագրվել արձանագրություն կամ որեւէ այլ համաձայնություն... Հայկական կողմը փորձում է երկարաձգել բանակցային գործընթացը՝ տարբեր պատճառաբանություններով: Դա աղակառուցողական քայլ է»:

Սկսենք վերջից: Որտեղի՞ց գիտի Նովրուզ Մամեդովը, որ «հայկական կողմը փորձում է երկարաձգել բանակցային գործընթացը՝ տարբեր պատճառաբանություններով»: Չէ՞ որ մարտի 5-ին Սոչիում հանդիպումից հետո կողմերի միջեւ ուղղակի շփում չի եղել: Դովլիլի հայտարարությունից հետո էլ արտգործնախարար Նալբանդյանն ասել է, որ Հայաստանը կարող է որոշես բանակցությունների հիմք ընդունել հայտնի սկզբունքները: Մինչդեռ նման տեսակետ պաշտոնական Բաքուն չի հնչեցրել: Եվ դա այն դեպքում, երբ ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահները բանակցող կողմերին հատկապես հորդորել են համաձայնության գալ սկզբունքների շուրջը, որը թույլ կտա սկսել աշխատանքը խաղաղության պայմանագրի շուրջը: Նույն բանն ասել է Էդվարդ Նալբանդյանը՝ հիմք ընդունել սկզբունքները եւ շարունակել բանակցությունները:

Նովրուզ Մամեդովը, սակայն, իրենից հայտնագործել է, որ «միջազգային հանրությունը եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները պահանջում են սատուս քվոյի փոփոխությունը»: Դովլիլի հայտարարության մեջ «սատուս քվո» ձեւակերպում չկա: Ուրեմն եւ չի կարող լինել այն «փոխելու պահանջ»: Երեք նախագահները խոսել են «ներկա դրության անընդունելի լինելու» մասին: Բայց դա վերաբերում է ոչ թե ընդհանուր, այլ բանակցային գործընթացում առկա դրությանը, որն իրոք անընդունելի է, երբ հայտնի է, թե ինչ հայեցակարգի վրա պիտի հիմնվի հետագա դիվանագիտական աշխատանքը, բայց կողմերից մեկի՝ Ադրբեջանի «կամակորության» պատճառով դա իրավական ձեւակերպում չի ստանում:

Կփոխվի՞ սատուս քվոն, ինչպե՞ս, ի՞նչ «ժամանակացույցով» եւ այլն, սրանք հարցեր են, որոնք ենթակա են քննարկման արդեն սկզբունքների համաձայնությունից հետո միայն: Իսկ Նովրուզ Մամեդովն ամեն ինչ «սկսում է որոշակի շրջանների ազատագրման»՝ միայն ադրբեջանական կողմի ցանկությունից: Դրան, բնականաբար, հակազդում է այլ՝ միանգամայն արդարացի ցանկություն, որ Ադրբեջանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի օրինական անկախությունը, որից հետո հակամարտության իրական կողմերը՝ Ադրբեջանը եւ ԼՂՀ-ն կարող են անցնել սահմանազատման, կոմունիկացիաների վերագործարկման եւ այլ հարցերի քննարկումների: Ի վերջո, այդ ո՞վ է ասել, թե «ադրբեջանական փախստականների վերաբնակեցումն» ավելի հրատապ հարց է, քան ԼՂՀ անկախության միջազգայնացումը: Եվ եթե կողմերից մեկը չի պնդում, որ դա տեղի ունենա «այստեղ եւ այժմ», ապա մյուսն էլ իրավասու չէ պահանջել, որ «սատուս քվոն փոխվի»: Չէ՞ որ «ոչինչ համաձայնեցված չէ, եթե ամեն ինչ համաձայնեցված չէ»:

Այս դեպքում «ամեն ինչը» սկզբունքներն են, բանակցությունների հիմքը: Այդ մասին Մամեդովը ոչինչ չի ասում: Ընդհակառակը, նա կանխապես հայկական կողմին վերագրում է «զանազան պատճառաբանություններով բանակցային գործընթացը երկարաձգելու փորձ», ինչից կարելի է եզրակացնել, որ Իլհամ Ալիեւն է Կազան մեկնելու՝ որեւէ փաստաթուղթ չստորագրելու մտադրությամբ: Եվ դրա համար նա հող նախապատրաստում է ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հետ հանդիպումից անմիջապես հետո: Ինչ են փոխանցել նրան վերջիններս՝ մնում է միայն ենթադրել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Գիտաժողով սեյսմակայունության ու սեյսմակայուն շինարարության թեմայով

Այսօր ժամը 9-17-ը Երեւանում տեղի կունենա միջազգային գիտաժողով սեյսմակայունության ու սեյսմակայուն շինարարության թեմայով: Այն տեղի կունենա Հրազդան հյուրանոցի կոնֆերանսների սրահում: Գիտաժողովին մասնակցում են հայտնի գիտնականներ Իտալիայից, Իրանից, Հայաստանից, Հունաստանից, Պորտուգալիայից եւ այլ երկրներից: Մասնակցում են նաեւ Հայաստանի նախագծային ու շինարարական խոշոր կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների ու քաղաքաշինության նախարարությունների ներկայացուցիչները:

Գիտաժողովին ներկա լրագրողները կստանան «Արտակարգ ալիքի» պատրաստած «Այրելով աղեղների հետ» տեսաֆիլմը: Գիտաժողովը հոբելյանական է՝ նվիրված է պրոֆեսոր Միխայել Մելքումյանի 60-ամյակին: Պրոֆեսոր Մելքումյանը ծանրակշիռ ներդրում ունի սեյսմակայունության ու սեյսմակայուն շինարարության ոլորտներում, նա ավելի քան 180 գիտական աշխատանքների, 13 գրքի, 10 նորմատիվ փաստաթղթի ու 12 գյուտի հեղինակ ու համահեղինակ է: Ներկայումս Միխայել Մելքումյանը Սեյսմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ է եւ ԱՊՀ երկրների Սեյսմամեկուսացման միջազգային ընկերակցության փոխնախագահը: Ի. Պ.

Ի՞նչ է նշանակում «ԼՂ միջանկյալ կարգավիճակ» եւ որտե՞ղ պետք է անցկացվի հանրաքվեն

1-ին էջից

Ադրբեջանի ԱԳ նախարարը, առաջարկված սկզբունքներից այս մեկի մասին խոսելիս, միշտ նշել է, որ ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի հարցը պետք է որոշվի կամարտահայտությամբ, բայց՝ «ամբողջ Ադրբեջանի քաղաքացիների»: Թերեւս Մամեդյարովը հասկացել է իր ասածի զավեշտ լինելը, եթե, իհարկե, նրան դա չեն «հասկացրել» ԵԱՀԿ Մինսկի խմբից: Այս վերջին ենթադրության հիմքեր կան: ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը Regnum գործակալությանը տված հարցազրույցում ներկայացրել է առաջարկված սկզբունքների եւ առհասարակ իրավիճակի որոշակի պարզաբանումներ, ինչը վկայում է, որ Կազանի առաջիկա եռակողմից ակնկալիքներ պետք է ունենալ: Մասնավորապես «ԼՂ-ին տրամադրել ժամանակավոր արգավիճակ» դրույթը Կասպրշիկը ներկայացրել է հետեւյալ կերպ. «Յուրաքանչյուր կարգավիճակը չպետք է էականորեն տարբերվի այն կարգավիճակից, որն այս պահին ունի Լեռնային Ղարաբաղը: Այդ ժամանակ հարկ կլինի այդ ժամանակավոր կազմավորման միջազգային ճանաչում: Շրջանակային համաձայնագրի ընդունումից հետո մանրամասների բանակցություններ կընթանան»: Ի՞նչ է սպասվում. ԼՂ-ին միջանկյալ, ժամանակավոր կարգավիճակի տրամադրումը, ըստ ԵԱՀԿ պաշտոնական ներկայացուցչի եւ Մինսկի խմբի համանախագահների հետ գործընթացին քաջատեղյակ դիվանագետի, նշանակում է ԼՂ-ի ներկա կարգավիճակ՝ միջազգային ճանաչում հավելումով: Այսինքն, ԼՂ-ն, իսկ տվյալ դեպքում, փաստորեն առանց վարանման՝ ԼՂՀ-ն, շարունակելու է պահպանել իր ինքնիշխանությունը, սակայն արդեն՝ այդ թվում Ադրբեջանի կողմից, թեկուզ ժամանակավոր, ճանաչված լինելով, մինչ ԼՂ վերջնական կարգավիճակի որոշումը: Այստեղ արդեն, ինչպես վկայում է միջնորդների ներկայացրած, եւ, փաստորեն, կողմերի միջեւ որոշակիորեն համաձայնեցված համաղաստախան սկզբունքը՝ «ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշվի ժողովրդի ազատ կամարտահայտությամբ»: Անշուշտ՝ «ուղղակի ժողովուրդ» տերմինը, որն արտահայտեցին նախագահներ Մեդվեդեւը, Օբաման եւ Սարկոզին՝ ներկայացնելով իրենց հայտարարությունը, թույլ էր տալիս Բաքվին՝ ի դեմս արտգործնախարար Մամեդյարովի, այս սկզբունքը հասկանալ իր ուզած ձեւով: Բայց, ինչպես վերը նշեցինք՝ փոխվել է Մամեդյարովի տեսքը, իսկ փոխվել է, քանի որ ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչ Կասպրշիկը նշել է, որ «ԼՂ վերջնական կարգավիճակը սահմանվելու է այդ տարածքում անցկացվելիք հանրաքվեի միջոցով»: Փաստորեն՝ համաղաստախան արդեն միջնորդների առաջարկի, ԼՂ ժողովուրդը ինքը իր ազատ կամարտակայությամբ պետք է որոշի իր քաղաքական ու իրավական կարգավիճակը, որն արդեն իսկ որոշել է՝ հռչակվելով Լեռնային Ղարաբաղի հանրապետություն:

Կասպրշիկը հարցազրույցի շարունակությունը նույնպես բավական պարզաբանող է ու հետաքրքրական: Մասնավորապես՝ լեհ դիվանագետը շեշտում է, որ «հրադադարի հաստատման համաձայնություն կա երեք կողմերի՝ Հայաստան, Ադրբեջան, ԼՂ, ստորագրությամբ, այդուհանդերձ Բաքուն ամեն կերպ խուսափում է Ստեփանակերտի հետ երկխոսությունից, դրանով իսկ խուսափելով Ղարաբաղի իրավասուբյեկտիվությունը ճանաչելուց: Ստեղծված իրավիճակում Հայաստանին այլ բան չի մնում, քան իշխուրույն ներկայացնել Ղարաբաղի բնակչության շահերը», թերեւս՝ առանց մեկնաբանությունների, միայն նշենք հենց իր՝ Կասպրշիկի հավելումը՝ «Անգամ բանակցությունների այս ձեւաչափի պարագայում անհրաժեշտ է հաշվի նստել Ստեփանակերտի կարծիքի հետ: Այժմ էլ ոչինչ առանց Ստեփանակերտին իրազեկելու, նրա դիրքորոշումը ճշտելու չի կատարվում...», հստակեցրել է ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչը:

Ուրեմն ի՞նչ է տեղի ունեցել, ի՞նչ իրավիճակ է ստեղծված՝ Կազանի առաջիկա եռակողմից առաջ: Թերեւս առաջին անգամ ԵԱՀԿ պաշտոնական ներկայացուցիչը, բավական տեւական ժամանակ Մինսկի խմբի համանախագահությունում ԵԱՀԿ գործող նախագահողի անձնական ներկայացուցիչը ներկայացնում է որոշ պարզաբանումներ, որոնք ամենեւին էլ առնվազն հակահայկական չեն: Կրկին առաջին անգամ Բաքուն՝ ի դեմս արտգործնախարարի, խոստովանում է, որ ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշվի հենց ԼՂ-ում անցկացվելիք հանրաքվեի միջոցով: Միակ մշուշոտ մնացած հարցը թերեւս այս համատեքստում, հետեւյալն է՝ ի՞նչ ասել է «ԼՂ տարածք». խոսքը նախկին ԽՍՀՄ ինքնավար մարզի տարածքի՞ մասին է, այսօրվա՞ ԼՂՀ-ի, եւ հավանական հանրաքվեի անցկացման ժամանակ արդյո՞ք չպետք է հաշվի առնվի նաեւ ԼՂ-ի Շահումյանի շրջանի բնակիչների խոսքը, չի՞ աղաղակվելու արդյոք նաեւ նրանց վերադարձը իրենց բնակավայրեր: Անշուշտ հստակեցնելու, պարզաբանելու դեռ շատ բան կա, ինչը նշանակում է, որ հակամարտ կողմերի խաղաղ բանակցությունների օրակարգը չի սպառվել, հետեւաբար շարունակական է, ավելին՝ կարող է բեկում ունենալ հունիսի վերջին Կազանում: Ճիշտ է, արդեն ադրբեջանցի քաղաքագետ Վաֆա Գուլուզադեն կարծում է, որ «առկա քաղաքական իրավիճակը լուրջ բեկումների հիմք չէ», սակայն ադրբեջանցի մեկ այլ քաղաքագետ Էլմար Նամազովի խոսքերով՝ «Ե՛վ Ադրբեջանին, Ե՛ւ Հայաստանին ճնշումների են ենթարկելու: Ադրբեջանին կստիպեն հրաժարվել հարցը պատերազմով լուծելու մտադրություններից, իսկ Հայաստանին կստիպեն հասկանալ, որ առկա սատուս քվոն չի կարող երկար շարունակվել»: Իսկ ո՞վ ասաց, որ Հայաստանը, առավել եւս ԼՂՀ խաղաղ բնակիչները, ցանկանում են սատուս քվոյի պահպանում, մանավանդ երբ իրենց ներկա կարգավիճակը պետք է թեկուզ ժամանակավոր, միջազգայնորեն ճանաչվի, իսկ վերջնական կարգավիճակի որոշողները հենց իրենք ղարաբաղցիները պետք է լինեն:

Հ. Գ.- Ադրբեջանի ԱԳ նախարարի վերոհիշյալ խոսքում հատկանշական է նաեւ «խաղաղապահ զորքերի» կազմի վերաբերյալ հիշատակումը, որտեղ, ըստ Մամեդյարովի, «հարեւան երկրների զորքերը տեղ չունեն»: Անշուշտ՝ առաջին հերթին նկատի է առնվում Իրանը: Սա հատկանշական է հատկապես հունիսի 6-ին Ահմադինեժադի՝ Երեւան կատարելիք պաշտոնական այցի հեռանկարի ֆոնին: Բացի սրանից՝ Մինսկի խմբի համանախագահներից Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւը երեկ հայտարարեց, որ ինքը մտադիր է մոտ օրերս հանդիպել Իրանի նախագահին...: Գուցե այս վերջինը ոչ մի էական կապ չունի Իրանի հյուսիսային սահմանների մոտ «խաղաղապահ, այդ թվում՝ ռուսական ուժերի ներկայացման» հետ:

«Ինձ պաշտոնազրկել են ԱՄՆ-ի եւ Հայաստանի պահանջով»

Հայտարարում է Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Հալաչօղլուն

Այդ մասին նախորդ օրը նշել է թուրքական Մեդիա-73 կայքէջը: Ըստ տեղեկության՝ պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն Կեսարիայում, որտեղից նա «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր է առաջադրվել հունիսի 12-ի խորհրդարանական ընտրություններում, ելույթ է ունեցել կուսակիցների առջեւ:

Ելույթում թուրքական պատմական ընկերության նախկին նախագահն ասել է. «Բոլորդ էլ գիտեք, թե ինձ ինչու ազատեցին պաշտոնից: Սակայն շատերը կարծում են, որ դրա պատճառը Քայսերիում (Կեսարիա) 2007-ին ունեցած ելույթս է: Ես ասել էի, որ հասարակության մեջ որպես քուրդ կամ ալավի քուրդ ներկայացողների մեջ շատ են հայ «դյոնմեները»: Իրականում ինձ պաշտոնից ազատելու պատճառը դա չէր: Այդ ժամանակ Շվեյցարիայում Թուրքիայի, ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ծավալվում էին գաղտնի բանակցություններ: Բանակցությունների քննարկման առարկան ցեղասպանության հարցն էր: Բոլորդ էլ գիտեք, որ ինձ պաշտոնազրկելուց հետո Թուրքիայի Հանրապետությունը հանդես եկավ «հայկական նախաձեռնությամբ», որը ենթադրում էր Հայաստանի առջեւ թուրքական սահմանների բացումը: Կողմերը դրա շուրջը եկել էին համաձայնության: Գիտեք նաեւ, որ այս փոխհամաձայնությունից բխող արձանագրությունները ստորագրվել են ԱՄՆ-ի գլխավորությամբ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Գերմանիայի նման մեծ տերությունների հովանու ներքո: Հենց այդ պահին էլ ԱՄՆ-ը եւ Հայաստանը պահանջեցին, որ ինձ ազատեն Թուրքական պատմական ընկերության նախագահի պաշտոնից: Այսպիսով ես պաշտոնազրկվեցի: Հենց այդ պահանջն է իմ պաշտոնազրկման բուն պատճառը»:

Հ. Ջ.

«Սառեցված հակամարտությունը» սկսում է եռալ

Հակառակ «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակներում ֆրանսիական Դովիլ քաղաքում Մեդվեդեւ-Օբամա-Սարկոզի եռյակի կատարած հայտարարությանը, թե բնակչությանը պետք է պատրաստել խաղաղության եւ ոչ թե պատերազմի, հակառակ Ադրբեջանի արգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ հանդիպման ժամանակ հնչած ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի կոչին, որ «անհրաժեշտ է ղարաբաղյան հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորում», եւ վերջապես հակառակ այն ակնկալիքներին, որ հունիսի վերջերին Կազանում կայանալիք եռակողմ՝ Մեդվեդեւ-Սարգսյան-Ալիեւ հանդիպումը դրական արդյունք է նախատեսում, Ադրբեջանի կառավարական շրջանակների վարած ագրեսիվ հաղթականության հետեւանքով թշնամանքն ու ատելությունը հայերի եւ Հայաստանի նկատմամբ գնալով առավել ցայտուն է դառնում: Դա նկատելի է հատկապես երիտասարդների շրջանում՝ ըստ «Նյու Յորք թայմսի» մայիսի 31-ի ամենայն հավանականությամբ պատվիրված հոդվածի, որտեղ հեղինակ Էլեն Բարրին բացահայտ կողմնապահություն է դրսեւորում: Ստորեւ հոդվածից թարգմանաբար ներկայացվող հատվածներում Ադրբեջանի երիտասարդների շրջանում ստեղծված ընդհանուր մթնոլորտն ու տրամադրությունն են ներկայացված, որը պետք է հետաքրքիր մեզ՝ մեր հետագա քայլերը կատարելու տեսանկյունից:

«Երբ զինվորական նախապատրաստական կուրսեր անցկացնող մի կազմակերպություն ադրիլին այստեղ (Բաքվում) դիպուկահարների վարժեցման դասընթացների հայտարարություն տվեց, սպասվածից երեք անգամ ավելի ուսանողներ դիմեցին: Դրա տրամաբանական բացատրությունն այն է, որ իրենց առօրյա կյանքի հոգսերի տակ թաքնված է վիրավորանքի ու բողոքի մի զգացում, որը տանջում է նրանց: 1990-ականների սկզբներից Ադրբեջանը փորձում է ձեռք բերել վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի՝ իր սահմաններում հայկական մի անկլավի նկատմամբ, որի բնակչության գերակշռող մասը հայեր են, եւ ապահովել վերադարձը այն ազերիների, որոնք պատերազմի պատճառով ստիպված էին հեռանալ իրենց տներից: 1994-ից հաստատվել է զինադադար, եւ պետական պաշտոնյաները շարունակում են վարել միջազգայնորեն միջնորդավորված բանակցություններ Հայաստանի հետ: Այդ գործընթացը դարձյալ ուշադրության է արժանանալու այս ամիս, երբ երկու կողմերը հանդիպեն Կազանում (Ռուսաստանում): Բայց փոխըմբռնման «պատուհանը» նեղ է, եւ մարդիկ այստեղ նշում են, որ «համբերություն այլեւս չունեն»:

«Ավելի լավ է պատերազմ գնամ, քան սպասեմ եւս 20 տարի», ասում է 34-ամյա Շաֆագ Իսմայիլովան, որը դիպուկահարների պատրաստման դասընթացներին մասնակցող ուսանողուհիներից է:

Լեռնային Ղարաբաղի, Մերձդնեստրի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկլավները ամենամեծ գլխացավանք պատճառող ժառանգություններն են, որոնք մնացել են Խորհրդային Միությունից: Սովետները նրանց կիսապետականություն էին շնորհել, որը դադարեց գոյություն ունենալուց, հենց որ ազգայնամոլությունը եկավ լրացնելու (Միության փլուզման հետեւանքով) ստեղծված գաղափարախոսական դատարկությունը: Բայց 2008-ի վրացական պատերազմը ցույց տվեց, որ «սառեցված հակամարտությունները» շատ շուտով եւ սարսափելի ձեւով կարող են «հալչել»:

Պատճառներից մեկը, թե ղարաբաղյան սառեցված հակամարտությունը չի հալվել, այն է, որ կողմերից ոչ մեկը, ոչ էլ մյուսը կռվելու դրդապատճառ չունեն: Հայաստանը վերահսկում է տարածքները եւ շահագրգռված է, որ պահպանվի ստատուս քվոն: Ադրբեջանը քիչ առաջընթաց է տեսնում: Չնայած հետաքրքրությամբ կարող է դուրս քաշել հայկական զորքին, չի համարձակվում այդ քայլին դիմել, քանի որ Ռուսաստանը կարող է իր զորքով օգնել Հայաստանին, որն իր ռազմավարական դաշնակիցն է տարածաշրջանում, ինչպես վարվեց Հարավային Օսիայում: Դրությունն ու պայմանները փոխվում են դանդաղորեն, բայց վստահորեն եւ վտանգավոր կերպով: ...Երկու երկրներն էլ զինվում են: Ադրբեջանը, որ շատ ավելի հարուստ է, 2003 թվականից ի վեր 20 անգամ մեծացրել է իր պաշտպանական ծախսերը, ըստ Միջազգային ճգնաժամային խմբի տվյալների: Կուտակված դժգոհությունների հետեւանքով պատերազմի սպառնալիքներն այնքան են միահյուսվել բանակցություններին, որ դժվար է ասել, թե որտեղ է մեկն սկսվում եւ մյուսն ավարտվում:

«Ոչ մի երաշխիք չկա, որ վաղը կամ մյուս օրը պատերազմը չի սկսվի,- ասում է նախագահի ավագ խորհրդականներից մեկը՝ Ալի Հասանովը,- մենք խաղաղ գոյակեցության եւ խաղաղ զարգացման կարիքն ունենք, ոչ թե պատերազմի: Բայց տարածքային ամբողջականությանը... ոչինչ չի կարող փոխարինել: Եթե պահանջվի, մենք մեր կյանքն ենք տալու դրա համար»: Նրա խոսքերով՝ Բաքուն խիստ հիասթափված է միջազգային միջնորդական ջանքերից: «ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը չեն կատարում իրենց խոստումը: Ամերիկան կարծում է, որ Աֆղանստանն ու Իրաքը ավելի կարեւոր են, նաեւ Հյուսիսային Աֆրիկան... քան Լեռնային Ղարաբաղի նման տարածաշրջանային հակամարտությունները»:

Բաքվի դժգոհություններին զարկ տվողը փախստականներն են, որոնք մոտ 20 տարի անորոշ վիճակում են: Ըստ ՄԱԿ-ի տվյալների, նրանց թիվը 586.013 է, այսինքն՝ բնակչության 7 տոկոսը, որը տեղահանվածների ամենաբարձր ցուցանիշն է աշխարհում՝ ըստ «Տեղահանվածների միջազգային մոնիտորինգ կենտրոնի» տվյալների:

«Նրանք տանել չեն կարողանում այլեւս այս իրավիճակը, պատերազմ են ուզում», ասում է Զամիլան, 41 տարեկան: «Եվ այդ բոլորի պատճառը անիծյալ հայերն են»:

Քաղաքական մեկնաբան Թաբիթ Հուսեյնովի կարծիքով, այս լարվածությունները

ԱԶԳ

Միջազգային

Ավստրիա-Թուրքիա դիվանագիտական վեճը շարունակվում է

«Պլաստնիկը չի ընդունում Թուրքիայի եվրոպական ինքնությունը», ասել է Ահմեդ Դավութօղլուն՝ մեկնաբանելով Թուրքիայի վետո ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում Ավստրիայի թեկնածու Ուրսուլա Պլաստնիկի դեմ: Թուրքիայի արտգործնախարարը հավաստիացրել է, թե վետոն Ավստրիայի դեմ չէ, այլ կոնկրետ թեկնածուի: «Մենք ոչ միայն Ավստրիային, այլեւ ԵԱՀԿ նախագահող երկրին՝ Լիտվային էլ տեղեկացրել ենք, թե մեզ համար անընդունելի է, որ միջազգային կարեւորագույն կազմակերպությունը մի անհաս գլխավորի, որ վիճարկում է մեր եվրոպական ինքնությունը», ասել է Դավութօղլուն հեռուստահարցազրույցներից մեկում, որ տարածել է «Հյուրիեթ դեյլի նյուզ» կիրակնօրյա ինտերնետային լրատուն, եւ որին հղում են անում ավստրիական լրատվամիջոցները: Վերջիններս գրում են, թե Թուրքիան դրանով վրեժ է լուծում՝ հիշեցնելով, որ 2005-ին Ավստրիայի արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Ուրսուլա Պլաստնիկը Թուրքիայի ԵՄ լրիվ անդամակցությանը դեմ էր արտահայտվել:

Դավութօղլուն ավելի վաղ հաղորդել էր, թե Թուրքիայի ներկայացրած թեկնածուն՝ դեսպան Էրսին Էրչինը ԵԱՀԿ 56 երկրների համակրանքն ու սատարումն է ստացել: Բայց Հայաստանի ու Հունաստանի վետոյից հետո Էրչինը երկրորդ տեղում է հայտնվել: Մյուս թեկնածուները իտալացի Լամբերտո Ցանիերն ու պորտուգալացի Խոան Սոարեսն են: Նախագահող Լիտվան պիտի որոշի՝ Պլաստնի՞կը, թե՞ մեկ ուրիշը: Հունիսի 7-ին ավստրիական լրատվամիջոցները իրազեկեցին, թե Լիտվան կողմ է իտալացուն: Լամբերտո Ցանիերը Կոսովոյում ՄԱԿ-ի ղեկավարն է:

Բայց դրանով ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնի շուրջը ծագած հակամարտությունը, դիվանագիտական վեճը վերջակետ չեն դնում: Թուրքիան դժգոհ է, որ Լիտվան ու Ավստրիան սահմանափակում են իր հնարավորությունները: Ավստրիան իրավունք չուներ որպես հյուրընկալ երկիր սեփական թեկնածու առաջադրել, ասում է Թուրքիան, իսկ բարձրաստիճան մի դիվանագետ Անկարայում հայտարարել է, թե «հենց սկզբից քաղաքական անբարո խաղ են խաղում՝ թուրքական թեկնածությունը խոչընդոտելու նպատակով»: Ի հեճուկս թուրքական վետոյի՝ Պլաստնիկն իր թեկնածությունը չի հանելու: Բացի դրանից, Ավստրիայի նախկին արտգործնախարարը հիշեցրել է, թե դիվանագիտության մեջ վրեժխնդրությունը տեղ չունի, իսկ իր անձի մասին էլ հիշեցրել է, թե արտգործնախարարի պաշտոնում ինքը միշտ արտահայտել է իր երկրի դիրքորոշումը: «Ավստրիա-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների վրա սառույց է նստում», «Թուրքական վրեժխնդիր դիվանագիտություն», ավստրիական մամուլում շաբաթասկզբին հայտնված վերնագրերը ինտերնետային տարբերակներում ավելի սուր բնորոշումներով են թարմացվում:

Մասնավորապես հայտնի է դառնում, որ մայիսի վերջին Ավստրիայի արտգործնախարար Շտինդելեգգերը ցանկություն է ունեցել Թուրքիա մեկնել եւ տարաձայնությունները իր պաշտոնակցի հետ դեմառդեմ պարզել: Ավստրիայի ԱԳ նախարարի համար անակնկալ է եղել Թուրքիայի պահվածքը, քանի որ, ըստ Դավութօղլուի հետ իր նախնական պայմանավորվածության, երկու երկրներն էլ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում իրենց թեկնածուն էին ունենալու, իսկ նախագահ Գյուլի հետ էլ համաձայնել էին միմյանց թեկնածուներին չխոչընդոտել: Բայց Շտինդելեգգերի այցը Թուրքիա չի կայացել: Թուրքիայի ԱԳ նախարար Դավութօղլուն ծանուցել է, թե ընտրությունների պատճառով ժամանակ չունի Ավստրիայի իր պաշտոնակցին ընդունելու:

Ան.Հ., Գերմանիա

Աշխարհում միջուկային զենքի տեղաբաշխման մասին

Ստոկհոլմում գործող խաղաղության խնդիրների հետազոտման ինստիտուտը (SIPRI) հրապարակել է հաշվետվություն, որի համաձայն աշխարհի միջուկային տերություններն ունեն 5027 տեղաբաշխված միջուկային մարտագլխիկ: Բացի դրանից, այդ երկրներն ունեն ներկայումս մարտական հերթապահության մեջ չգտնվող 15.5 հազար միջուկային մարտագլխիկ:

SIPRI-ի տվյալներով, խոշորագույն միջուկային տերություններն են Ռուսաստանը (2427 մարտագլխիկ), ԱՄՆ-ը (2150), Ֆրանսիան (290) եւ Մեծ Բրիտանիան (160):

Աշխարհում (արձակման միջոցներ եւ պահեստներ) ընդամենը կա 20530 միջուկային մարտագլխիկ: 2009-ին այդ ցուցանիշը 22,6 հազար էր: Ստոկհոլմյան ինստիտուտի տվյալներով, վերոհիշյալ երկրներից բացի, ներկայումս միջուկային զենք ունեն Չինաստանը (200 մարտագլխիկ), Հնդկաստանը (80-110), Պակիստանը (90-110) եւ Իսրայելը (80): Այս երկրների միջուկային զենքը մարտական հերթապահության մեջ չէ:

2011 թ. մարտի 22-ին Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը տվյալներ փոխանակեցին ռազմավարական միջուկային սպառազինությունների կազմի եւ տեղաբաշխման վայրերի վերաբերյալ: Փոխանակումը կատարվեց Ռազմավարական հարձակողական սպառազինությունների կրճատման պայմանագրի (ՌՀՍ-3) շրջանակներում: Հունիսի սկզբին այդ տվյալները հրապարակվեցին ԱՄՆ պետդեպարտամենտի զեկուցագրում: Ըստ այդ տվյալների, ԱՄՆ-ը ունի մարտական հերթապահության մեջ չգտնվող 1800 մարտագլխիկ, Ռուսաստանը՝ 1537:

Այս տարի Պենտագոնը 1961-ից հետո առաջին անգամ հրապարակեց ամերիկյան միջուկային զինանոցին վերաբերող տվյալներ: Ռուսաստանը սեփական միջուկային զենքի պաշարները չի բացահայտում:

Պ. Ք.

Քիթի եւ Լալա Բլոգերները՝ որպես աստղեր

Սանտա Կլարայում տեղակայված «Ինտել կորպորացիան» Միացյալ Նահանգներում այս օրերին կազմակերպում է բլոգերներին նվիրված երկրորդ ֆիլմի ցուցադրությունը, որը կրում է «Քիթին եւ Լալան» խորագիրը, պատրաստված «Ամստերդամ Ուտլդուայդ» շուկայական հաղորդակցությունների միջազգային գործակալության կողմից, տեղեկացնում է Զեյդ Զեֆսոնը Ամստերդամից:

Պեկինում եւ Հանչժոուում պատրաստված ֆիլմը՝ «Քիթին եւ Լալան», չափազանց գեղեցիկ տեսարաններով ներկայացնում է ժամանակակից Չինաստանը եւ տեխնոլոգիաների վճռորոշ դերը մարդկանց առօրյա տեսողական կյանքում: Ֆիլմը նաեւ բացահայտում է, թե ինչպես կարելի է, հարգանք տածելով ավանդական մշակութային ժառանգությանը, լինել ստեղծագործող եւ առանձնահատուկ: Այս բոլորը երկու հարսանեկան լուսանկարիչների՝ Քիթիի եւ Լալայի աչքերով, որոնք նաեւ ամենաժողովրդական բլոգերն են վարում Չինաստանում:

«Չինաստանում աղրող ներկա սերունդը հսկայական առաջընթաց է ապրել եւ ընդլայնել իր մտահորիզոնը շնորհիվ տեխնոլոգիական առաջընթացի», մեկնաբանել է «Ամստերդամ Ուտլդուայդի» հիմնադիր եւ գործադիր տնօրեն Բրայան Էլիոթը, ավելացնելով, որ Քիթին եւ Լալան դրա լավագույն օրինակներն են:

Ֆիլմի ռեժիսորն է ավստրալիացի, բայց Պեկինում հաստատված մրցանակակիր կինոգործիչ Քիան Լին, իսկ «Ամստերդամ Ուտլդուայդի» առաջին ֆիլմը՝ նվիրված բլոգերներին, թողարկվել էր այս տարվա հունվարին:

«Սարտորիալիստ» վավերագրական ֆիլմը, որը պատմում էր լուսանկարիչ եւ բլոգեր Սթաթ Շումանի մասին, գրավել էր մոտ մեկ միլիոն մարդու ուշադրությունը:

Տ. Ծ.

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» շարժումն այլեւս արգելված չէ

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժումը հանվել է արգելված կազմակերպությունների ցանկից, հաղորդում է Ֆրանսպրեսը: Այսպիսով, իսլամական պետության ստեղծման ջատագով այդ կազմակերպությունը իր 83-ամյակի պատմության մեջ առաջին անգամ դառնում է օրինական քաղաքական շարժում:

Այսուհետեւ շարժումը կոչվելու է «Ազատության եւ արդարության կուսակցություն», հնարավորություն ստանալով մասնակցելու ընտրություններին: Դրա առաջնորդների հայտարարությունների համաձայն, կուսակցությունը ոչ թե լինելու է աստվածապետական, այլ դառնալու է եվրոպական ավանդապաշտ քրիստոնեա-դեմոկրատական միավորումների նմանակը:

Կուսակցության խնդիրն է սեպտեմբերյան խորհրդարանական ընտրություններում ստանալ օրենսդիր ժողովի տեղերի 1/3-ից մինչեւ կեսը:

1928-ին հիմնված շարժման օրինականացմանը նպաստեց Եգիպտոսի հեղափոխությունը, որի շնորհիվ փետրվարի 11-ին պաշտոնանկ արվեց նախագահ Հոսնի Մուբարաքը:

Հեղափոխությունից հետո եգիպտական ԶԼՄ-ներում գրաքննությունը վերացվեց, իսկ քաղաքացիներն իրավունք ստացան ազատորեն միավորվելու կուսակցությունների մեջ եւ մասնակցելու ընտրություններին: Մինչ այդ տվյալ իրավունքը նրանց ընձեռված էր սոսկ ձեւականորեն:

Սիրիայի հյուսիս-արեւմուտքում 120 ոստիկան է սպանվել

Իշխանությունները «չեն լռելու»

Սիրիայի հյուսիս-արեւմուտքում գտնվող Ջիսր ալ Շուգուր քաղաքում անհայտ զինված անձանց հարձակման հետեւանքով վերջին երկու օրերին 120 ոստիկան է սպանվել: Այդ մասին հաղորդում է Սիրիայի պետական հեռուստատեսությունը:

Հրապարակված պաշտոնական հաղորդագրության տեքստի համաձայն, իրավապահ մարմինների աշխատակիցները ծուղակն են ընկել, երբ դեպի քաղաք էին շարժվում հակակառավարական ապստամբության կազմակերպած զինյալ հրոսակախմբերից այն մաքրելու համար:

Հեռուստահաղորդումների համաձայն, զինյալների հրոսակախմբերը երկուշաբթի օրը հրկիզել են կառավարական շենքերը եւ կրակ են բացել խաղաղ բնակիչների եւ իրավապահների վրա: Հարձակվողներն օգտագործել են թեթեւ հրազեն, նռնակներ եւ գողացված պայթուցիկ նյութեր:

Եթե սպանված ոստիկանների թվի վերաբերյալ հրապարակված տվյալները ճիշտ են, ապա երկրում բողոքի զանգվածային ելույթներն սկսվելուց ի վեր սա առաջին դեպքն է, երբ իշխանությունները խոստովանում են իրենց կողմնակիցների այդքան լուրջ կորուստները, նշում է BBC-ն:

«Ալ Ջազիրա» հեռուստաալիքը ընդգծում է, որ Սիրիայի պետականամետ լրատվամիջոցների հաղորդած տեղեկություններն անհնար է ստուգել: Իրավապաշտպան կազմակերպությունները իրենց հերթին նշում են, որ շաբաթավերջին Ջիսր ալ Շուգուրում սպանվել են 35 անձինք, բայց նրանց մեջ կան ոչ միայն ոստիկաններ, այլեւ խաղաղ բնակիչներ:

Սիրիայի ներգործնախարար Իբրահիմ Շարարը իր հեռուստաելույթում ընդգծել է, որ իշխանությունները «չեն լռելու այն զինված հարձակումների առնչությամբ, որոնք ուղղված են պետության եւ քաղաքացիների անվտանգության դեմ»:

Ելույթից հետո քաղաքի բնակչության անունից ինտերնետում հայտնված հայտարարության մեջ նախազգուշացնում է արվում, որ վերահսկողությունն ուժով վերականգնելու իշխանությունների փորձերը կարող են հանգեցնել լայնընդգրկուն արյունահեղության:

Ջիսր ալ Շուգուրը Թուրքիայի սահմանից ընդամենը 20 կմ հեռու է: 1980-ին այնտեղ իսլամիստներն ապստամբել էին նախագահ Հաֆեզ Ասադի՝ ներկայիս նախագահի հոր դեմ: Ապստամբությունը դաժանորեն ճնշվել էր:

2011-ի մարտից անցկացվող հակակառավարական ցույցերի մասնակիցները պահանջում են կենսապայմանների բարելավում եւ, իբր, երկրի քաղաքական համակարգի ժողովրդավարացում:

Պ. Ք.

Եմենում համաձայն են փոխնախագահի իշխանությանը

Եմենում ընդդիմությունը հայտարարել է, որ նախագահ Սալեհի բացակայության պայմաններում երկրի իշխանությունը փոխանցվի փոխնախագահին: Հակառակ դեպքում ընդդիմադիրները կստեղծեն անցումային կառավարություն: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

«**Ազգը**» գրել է, որ ուրբաթ օրը հրետակոծության հետեւանքով վիրավորված նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհը ներկայումս բուժվում է Սաուդյան Արաբիայում: Պետության ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարում է փոխնախագահ Աբդ Ռաբբու Մանսուր Հադին: Նա հայտարարել է, որ Սալեհը Եմեն կվերադառնա մի քանի օրից (որոշ տեղեկությունների համաձայն՝ երկու շաբաթից): Սակայն դիտորդներից ոմանք կարծում են, որ նախագահ Սալեհը դժվար թե վերադառնա Եմեն:

Չնայած վերջին ամիսներին Եմենում տեղի ունեցող բողոքի ցույցերին եւ բախումներին, 1978-ից երկրում իշխող Սալեհը չի ուզում հեռանալ: Երկրում ծագել է քաղաքացիական պատերազմի վտանգ: Նույնիսկ Սալեհի մեկնելուց հետո էլ մայրաքաղաք Սանայում երկուշաբթի օրը բախումների ընթացքում երեք մարդ սպանվեց: Սալեհը երիցս հրաժարվել է ստորագրել այն Պարսից ծոցի երկրների (մասնավորապես Սաուդյան Արաբիայի) մասնակցությամբ մշակված այն համաձայնագիրը, ըստ որի ինքը պետք է հրաժարական տա հետագոյդումից զերծ մնալու պայմանով:

Թալալյանների անվան ալտի եւ թավջութակի փառատոն

«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը, մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ հունիսի 7-26-ը Երեւան, Գավառ եւ Վանաձոր քաղաքներում անց է կացնում Հենրիկ եւ Գերոնտի Թալալյանների անվան ալտի եւ թավջութակի երկրորդ փառատոնը: Ինչպես տեղեկացրեց փառատոնի նախագահ Մարիամ Շահինյանը, 2008-2009 թթ. անցկացված Գերոնտի Թալալյանի անվան թավջութակի հանրապետական փառատոնների փորձը ցույց տվեց, որ Հայաստանում կատարողական արվեստի զարգացման խնդիրների, մասնավորապես թավջութակի դպրոցի զարգացման գործում նմանատիպ փառատոնի անցկացումը արդիական եւ օրախնդիր հարց էր: Մայիսի 31-ին ավարտվեց «Արվեստների պատկերասրահ» հիմնադրամի գարնանային 7-րդ միջազգային երաժշտական փառատոնը, եւ ահա մեկ շաբաթ անց մեկնարկում է ամառային փառատոնը: Փառատոնը ընդլայնելով իր շրջանակները այս տարի թավջութակից բացի ընդգրկել է նաեւ ալտ գործիքը եւ փառատոնը վերանվանվեց Հենրիկ եւ Գերոնտի Թալալյանների անվան:

Ինչպես նշեց փառատոնի հիմնադիր, դիրիժոր եւ գեղեկ, ՀՀ վաստակավոր արտիստ Արամ Թալալյանը. «Փառատոնը նպատակ ունի զարգացնելու ալտ եւ թավջութակ գործիքների կատարողական արվեստը՝ հիմնվելով տասնամյակների ընթացքում ձեւավորված կատարողական դպրոցի նվաճումների եւ ձեռքբերումների վրա, ինչպես նաեւ խթանել այդ երկու գործիքների հանդեպ հետաքրքրությունը նոր երկերի ստեղծումը՝ այս գործընթացում ներգրավելով հայ արդի կոմպոզիտորներին»: Պարոն Թալալյանը հույս հայտնեց, որ կգա այն ժամանակը, երբ կոնսերվատորիայի ուսանողները պայմանագրով կուղարկվեն սահմանամերձ շրջանների երաժշտական դպրոցներ դասավանդելու: Եթե լուրջ ծրագրեր չիրականացվեն դասական երաժշտությունը մարզերում զարգացնելու, ալտի, թավջութակի եւ ընդհանրապես լարային գործիքների նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու ուղղությամբ, ապա տարիներ հետո շատ նվագախմբերում թափուր տեղեր կլինեն: Տիկին Շահինյանն ավելացրեց. «Հենց այդ խնդիրները որոշ չափով լուծելու միտումով առաջին անգամ նման կարեւոր փառատոնը մեկնարկում է Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցում»:

Փառատոնը բաղկացած է 5 համերգից, որոնց կմասնակցեն մոտ 30 երաժիշտներ, երաժշտական դպրոցի սաներ, կոնսերվատորիայի ուսանողներ, ճանաչված երաժիշտներ, ինչպես նաեւ փառատոնի կամերային նվագախումբը՝ Արամ Թալալյանի գլխավորությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Նոր մրցանակ՝ մեր հայրենակցին

Վերջերս բանաստեղծ, թարգմանիչ, սերբագետ Բաբկեն Սիմոնյանը հրավիրվել էր մասնակցելու թարգմանիչների բելգրադյան 36-րդ հանդիպմանը, որը կրում էր «Լեզուներն առանց սահմանի» նշանաբանը:

Թարգմանիչների ամենամյա բելգրադյան հանդիպումներին Բաբկեն Սիմոնյանը մասնակցել է ութ անգամ: Դրանցից յուրաքանչյուրի ժամանակ նա ոչ միայն ներկայացրել է սերբերենից կատարած իր թարգմանությունները, այլեւ հայ գրականությունը սերբերենով ներկայացնելու իր ազգանվեր առաքելությունը:

Դեռ անցյալ դարի 90-ական թվականներին նա սերբերենով հրատարակել է Թումանյանի հեքիաթների գեղեցիկ մի ընտրանի, այնուհետեւ հայոց Մեծ եղեռնին նվիրված համառոտ մի գիրք, հայ մանկագիրների ստեղծագործությունների ընտրանի, ավելի ուշ՝ Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքի համար առաջաբան գրել, եւ հրատարակչի առաջարկով կատարել մասնագիտական խմբագրում, նաեւ խոսք գրեց «Քարի փայլը» հայ պոեզիայի անթոլոգիայի համար: Հայաստանում նա կազմել, թարգմանել (այլ բանաստեղծների հետ համատեղ) եւ առաջաբան է գրել «Արարատի երկիր» եւ «Կոսովյան արեւ» սերբական ժամանակակից պոեզիայի անթոլոգիաների համար: Այս տարվա սկզբին նրա թարգմանությամբ լույս տեսավ «Սերբական ժողովրդական հեքիաթներ» գիրքը: Սիմոնյանի թարգմանությամբ տպագրվել են սերբ առաջին բանաստեղծուհի Եֆիմիայի «Գովք իշխան Լազարին» բանաստեղծությունը եւ հատվածներ 19-րդ դարի մեծանուն բանաստեղծ, Չեռնոգորիայի տիրակալ Պետար Պետրովիչ Նեգոշի «Լեռնային պսակ» պոեմից: Նա վերջերս թարգմանել է նաեւ Նեգոշի «Դարից թանկ գիշերը» բանաստեղծությունը, որը համարվում է բոլոր ժամանակների սերբական քնարերգության գագաթը:

Թարգմանիչների բելգրադյան 36-րդ հանդիպման օրերին ի թիվս օտարազգի լավագույն մի շարք թարգմանիչների, մեր հայրենակից Բաբկեն Սիմոնյանին եւս շնորհվել է Սերբիայի թարգմանիչների միության մրցանակ: Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունից հետո Սիմոնյանին շնորհավորել են ոչ միայն նրա սերբ գրչընկերները, այլ շատ բելգրադահայեր: Նշենք նաեւ, որ վերջին մեկ տարում սա Բաբկեն Սիմոնյանի՝ թվով երրորդ մրցանակն է: Անցյալ տարի նա արժանացել է հայկական «Կանթեղ», իսկ Բելգրադում «Զլատկո Կրասնի» թարգմանական մրցանակներին:

ՌՈՒԲԵՆ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

Բոնզ՝ Քյոլնի հայ համայնքի «Կոմիտաս» երգչախմբին

Հունիսի 2-6 գերմանական Լիմբուրգ-Լինդենհոլցհաուզենում անցկացված երգչախմբային երաժշտության եւ ազգագրության «Հարմոնի» միջազգային փառատոնին առաջին անգամ մասնակցած Քյոլնի հայ համայնքի «Կոմիտաս» երգչախումբն աննկատ չի մնացել: Հանդես գալով մրցակցային 15 անվանակարգերից 14-ում՝ գործիքային կատարման ուղեկցությամբ ազգագրական երգչախումբ, Արտակ Ոսկանյանի ղեկավարած «Կոմիտասը» հնչեցրել է «Նուբար-նուբար», «Էրեբունի-Երեւան» եւ «Հայաստան» (երաժշտությունը՝ Արմեն Սմբատյանի, խոսքի հեղինակ՝ Վահան Անդրեասյան) ստեղծագործությունները՝ արժանանալով բրոնզի: Հիշյալ անվանակարգում առաջին մրցանակ չի եղել: Բացի դրանից «Կոմիտասը» ճանաչվել է նաեւ Գերմանիայի լավագույն օտարերկրյա երգչախումբ:

«Հարմոնի» փառատոնը մեկնարկել է 1981-ին: 2011-ին այն անցկացվում էր 6-րդ անգամ: Փառատոնի կազմակերպիչը Լինդենհոլցհաուզենի՝ բազմաթիվ մրցանակներ շահած արական «Հարմոնի» երգչախումբն է, որ տարիներ ի վեր համերգային շրջագայություններ է ունեցել աշխարհի տարբեր երկրներում՝ ընդլայնելով բարեկամների իր շրջանակը: «Հարմոնի» միջազգային փառատոնը իր երգչախմբային ու ազգագրական միջոցառումների, մրցույթների շնորհիվ աշխարհում ճանաչված երաժշտական փառատոնի համբավ է ձեռք բերել: 2011-ի փառատոնն անցկացվում էր ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելի հովանու ներքո: Աշխարհի տարբեր երկրներից, նաեւ Գերմանիայի տարբեր քաղաքներից մասնակից երգչախմբերն ու անսամբլները մրցում են 15 անվանակարգերում, արժանանալով տարբեր երկրներից հրավիրված մասնագիտական ժյուրիի գնահատականին: 2011-ին մասնակցության հայտ էր ներկայացրել ավելի քան 40 երկրների 200 երգչախումբ եւ ազգագրական խումբ (արական, իգական, պատանեկան, մանկական, ժողովրդական): «Կոմիտասը» ներկայացնում էր Հայաստանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

«Կ. ՍԱՐԱՋՅԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Համերգ թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջին Կոնստանտին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցը հաշվետու համերգ է կազմակերպում: Դպրոցի սաներն ու մանկավարժները համերգի ընթացքում ամփոփում են ողջ տարվա իրենց աշխատանքն ու ձեռքբերումները: Դպրոցի տնօրեն **Արմինե Պողոսյանն** ասում է, որ սա արդեն հաճելի ավանդույթի է վերածվել:

Երկուշաբթի երեկոյան Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահը լեփ-լեցուն էր: Այստեղ կազմակերպվել էր դպրոցի հերթական հաշվետու համերգը: Մանկավարժները, երեխաների ծնողները, ընկերները, բարեկամներն ու պարզապես երաժշտասեր մարդիկ եկել էին ունկնդրելու շնորհալի փոքրիկների ու պատանիների կատարումները: Այս անգամ ամփոփվում էր 2010-2011 թվականների ուսումնական տարվա աշխատանքը: Դպրոցը երգի ու երաժշտական տարբեր գործիքների ուսուցման բաժիններ ունի: Ըստ տնօրենի՝ նույնիսկ արդեն բացվել են պարի, նկարչության ու աստմունքի բաժիններ: Համերգի ընթացքում սաները հանդես եկան դիոլի, ջութակի, ֆլեյտայի, քանոնի ու երաժշտական այլ գործիքների կատարմամբ, ելույթ ունեցան նաեւ դպրոցի երգչախմբերը: Տնօրենը պատմում է, որ իրենց սաները մշտապես մասնակցում են միջազգային ու հանրապետական մրցույթներին, եւ իր գոյության շուրջ 60 տարիների ընթացքում դպրոցը բազմաթիվ դափնեկիրներ է ունեցել. «Օրինակ՝ այս տարի ֆլեյտա նվագող սաներից մեկը «Վերածնունդ» փառատոնում ոսկե մեդալի արժանացավ ու ստացավ առաջին մրցանակը»: Իսկ դաշնամուրային բաժնի աշակերտներն առաջիկայում կմասնակցեն Առնո Բաբաջանյանի անվան հանրապետական մրցույթին:

15-ամյա **Արսինե Թամասյանը**, որը դաշնամուրի բաժնում է սովորում ու երգում երգչախմբում, ասում է, որ դպրոցում զուգահեռ ուսուցանում են եւ երաժշտական գրականություն: Իսկ 14-ամյա **Ազատ Հովհաննիսյանը**, որը 6 տարի է կիթառի բաժին է հաճախում, ասում է, որ գործիքի ընտրությունն ինքնուրույն է արել: Ազատը որոշել է հայտնի երաժիշտ դառնալ, նաեւ նշում է, որ դպրոցում ամենաշատը սիրում է կիթառի իր ուսուցչին՝ ընկեր Վարդանին:

Երաժշտական դպրոցն այսօր 500 աշակերտ ունի, եւ տնօրենն իրենց ամենակարեւոր ձեռքբերումը համարում է հենց բարձր դիմելիությունը. «Մեր համար ամենակարեւորն հենց սա է, որ այսքան երեխաներ ուզում են սովորել մեր դպրոցում: Իսկ նրանց հաջողությունները համարում ենք նաեւ մեր հաջողությունը»:

Համերգի մասնակիցները՝ տնօրեն Արմինե Պողոսյանի հետ:

Կոնստանտին Սարաջյանի անվան դպրոցը հիմնադրվել է 1952 թվականին: «Եկող տարի նշելու ենք դպրոցի 60-ամյակը», հավելում է տնօրենը:

Համերգին ելույթ ունեցող աշակերտների հետ միասին հուզվում էին նաեւ մանկավարժները, որոնց խոսքով՝ աշակերտի հաջող ելույթն իրենց համար ավելի կարեւոր է, քան սեփական ելույթը: Քանոնի ուսուցչուհի **Անուշ Կիրակոսյանը** խոստովանում է, որ երեխաներին մանկավարժը ոչ միայն շատ բան ունի սովորեցնելու, այլեւ ինքն էլ երեխաներից սովորելու շատ բան ունի. «Երեխան մի հետաքրքիր աշխարհ է»:

Դպրոցի մեծերի երգչախումբը

Համերգի վերջում երեխաները կատարեցին հայտնի մուլտֆիլմից կոկորդիլոս Գենայի երգը: Իսկ դահլիճում նստածները, որոնք կիսաձայն երգում էին երեխաների հետ, մտովի տեղափոխվել էին իրենց մանկության մոլորակը:

Ի. Պ.

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է Երեւան քաղաքում գործող «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 12,46 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հունիսի 15-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Գերազանց խաղ, տպավորիչ հաղթանակ

Հայաստանի երիտասարդական հավաքականը տպավորիչ հաղթանակով սկսեց 2013թ. Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարը: Մեր ֆուտբոլիստները երեկ «Հանրապետականում» կայացած խաղում 4-1 հաշվով պարտության մատնեցին Չեռնոգորիայի հավաքականին:

Խաղից առաջ կայացած մամուլի ասուլիսում Չեռնոգորիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դուշան Վլայսավլեւիչը հայտարարել էր, որ Երեւան են ժամանել հաղթանակ տոնելու վճռականությամբ, մանավանդ որ ընդամենը մի քանի օր առաջ ընտրական մրցաշարի մեկնարկային տուրում չեռնոգորցիները 5-0 հաշվով ջախջախել էին Անդորրայի ընտրանուն: Իսկ ահա Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը նշել էր, որ թեեւ ընտրական մրցաշարում թիմի առջեւ կոնկրետ խնդիր դրված չէ, սակայն իրենք եւս ձգտելու են հաղթանակի լավ խաղ ցուցադրելու շնորհիվ:

Արժանին պետք է մատուցել Հայաստանի հավաքականի երիտասարդ ֆուտբոլիստներին, որոնք չնայած արդեն 23-րդ րոպեին խաղադաշտում մնացել էին 10 հոգով (երկու դեղին քարտերի պատճառով հեռացվել էր Արսակ Ալեքսանյանը), սակայն ողջ հանդիպումն անցկացրին հարձակողական ոճով, ցուցադրեցին գրագետ ու դիտարժան ֆուտբոլ եւ արժանի հաղթանակ տոնեցին: Գովելի է նաեւ հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի ընտրած մարտավարությունը, որը մեր խաղացողի հեռացումից հետո ոչ թե փորձեց ամրապնդել պաշտպանությունը եւ պահպանել հաղթական հաշիվը, այլ ընդմիջումից հետո կատարած փոփոխություններով ավելի ակտիվացրեց եւ ուժեղացրեց հարձակման գիծը, որոնց շնորհիվ 2-րդ խաղակեսում դաշտի տերերը բացահայտ առավելության հասան մրցակցի նկատմամբ:

Այս խաղում իրեն հիանալի դրսեւորեց Էդգար Մալաֆյանը, որն արդեն 3-րդ րոպեին գլխի հարվածով բացեց հաշիվը: Իսկ ընդմիջումից փիչ հետո նրա խփած 2-րդ գոլը շրջադարձային եղավ, վստահություն ներշնչեց մեր հավաքականի տղաներին, որոնք եւս 2 անգամ հասան հաջողության: Գեղեցիկ գոլերի հեղինակներ դարձան Հովհաննես Հովհաննիսյանն ու Վալտեր Պողոսյանը: Իսկ մրցակիցը միակ գոլը խփեց մեր դարպասապահ Արսեն Պետրոսյանի թերեւս միակ սխալի հետեւանքով: Աչքի ընկավ Ստեֆան Նիկոլիչը: Հաշիվը կարող էր ավելի խոշոր լինել, եթե գոլային պահերն իրացնեին Կամո Հովհաննիսյանը, Մասիս Ոսկանյանն ու Էդգար Մալաֆյանը, իսկ Արսակ Եդիգարյանի տուգանային հարվածից հետո գնդակը հետ չմղվեր հորիզոնական ձողից:

Շնորհավորելով ՀՀ հավաքականին, հուսանք, որ հաղթական մեկնարկը կոգեւորի հայ ֆուտբոլիստներին եւ նրանք հաջողությամբ կպայքարեն եզրափակիչի ուղեգրի համար:

Տիջաբների պատճառով իրանցի ֆուտբոլիստուհիներին արգելեցին մասնակցել խաղին

Ֆուտբոլի Իրանի կանանց հավաքականին չեն թույլատրել մասնակցելու Հորդանանի ընտրանու հետ 2012-ի օլիմպիական խաղերի ընտրական մրցախաղին: Հանդիպման բահրեյնցի մրցավարն արգելել է իրանցի ֆուտբոլիստուհիներին խաղին մասնակցել հիջաբներով (գլխաշոր): Ի նշան բողոքի, իրանցի ֆուտբոլիստուհիները դուրս են եկել խաղադաշտ, երգել են ազգային օրհներգը, համբուրել պետական դրոշն ու հեռացել են: Արդյունքում Իրանի հավաքականին 0-3 հաշվով տեխնիկական պարտություն է գրանցվել:

Այս փաստի առնչությամբ իրանցիները բողոք են ներկայացրել ՖԻՖԱ, որը սակայն մերժվել է: Իրանի հավաքականը որոշել է հրաժարվել ընտրական մրցաշարից՝ չներկայանալով Վիետնամի հետ կիրակի օր նշանակված հանդիպմանը:

Ըստ ՖԻՖԱ-ի 4-րդ հոդվածի, մարզիկների մարզահագուստը չպետք է արտահայտի որեւէ քաղաքական, կրոնական կամ անձնական համոզմունք: Իրանցիների մարզահագուստում հենց այդ հոդվածի խախտում էր արձանագրվել: Նշենք, որ անցյալ տարի Իրանի կանանց հավաքականին չէին թույլատրել մասնակցելու երիտասարդական օլիմպիադային, քանի որ ֆուտբոլիստուհիները հիջաբներ էին կրել: Եվ թեեւ դրանից հետո մարզահագուստում իրանցիները որոշակի փոփոխություններ էին կատարել, սակայն դրանք բավարար չէին խաղերի թույլտվություն ստանալու համար: Ճիշտ է, նոր մարզահագուստով Իրանի կանանց հավաքականը մեկ խաղ անցկացրել էր, իսկ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ալի Կաֆաշյանը նույնիսկ այն ցույց էր տվել Յոզեֆ Բլատերին: Այն ժամանակ իրանցիներին հավաստիացրել էին, որ նոր մարզահագուստը չի հակասում ՖԻՖԱ-ի 4-րդ հոդվածի պահանջներին:

Հայաստանից չորս մասնակից

ՖԻԴԵ-ն հրապարակել է այն շախմատիստների ցանկը, որոնք իրավունք ունեն մասնակցելու Խանտի Մանսիյսկում օգոստոսի 26-ից սեպտեմբերի 21-ը կայանալիք շախմատի աշխարհի գավաթի հերթական խաղարկությանը: Ցուցակը գլխավորում է աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը, որին հաջորդում են նախորդ խաղարկության չորս լավագույն շախմատիստները՝ Բորիս Գելֆանդը, Ռուսլան Պոնոմարյովը, Սերգեյ Կարյակինն ու Վլադիմիր Մալախովը:

Հայաստանից աշխարհի գավաթի խաղարկությանը կմասնակցի 4 շախմատիստ: Լեւոն Արոնյանն այդ իրավունքը ստացել է իր բարձր վարկանիշի շնորհիվ, իսկ Արման Փաշիկյանը, Սերգեյ Մովսիսյանն ու Վլադիմիր Հակոբյանն աշխարհի գավաթի խաղարկության ուղեգրեր են նվաճել 2010-ի Եվրոպայի առաջնությունում:

Աշխարհի գավաթի խաղարկությունում 19-ական ներկայացուցիչ կունենան Ամերիկան, Ասիան եւ Օվկեանիան, 6 շախմատիստ կներկայացնի Աֆրիկան: ՖԻԴԵ-ի նախագահն իրավունք ունի ընտրելու 6 շախմատիստի եւ թույլատրելու մասնակցելու խաղարկությանը: 4 շախմատիստի էլ մասնակցության իրավունք կտա մրցաշարի կազմկոմիտեն: Ընդհանուր առմամբ մրցաշարին կմասնակցեն 128 շախմատիստներ: Մրցաշարը կանցկացվի նոկաուտ համակարգով:

Մինչեւ հունիսի 20-ը խաղարկությանը մասնակցելու իրավունք ունեցող շախմատիստները պետք է իրենց ստորագրությամբ պայմանագիրն ուղարկեն ՖԻԴԵ-ի քարտուղարություն:

Եզրափակիչում կմենամարտեն Քրոչն ու Ուորդը

Հայտնի դարձավ 2-րդ միջինքաշային կարգի Super Six մրցաշարի եզրափակիչի երկրորդ մասնակիցը: ԱՄՆ-ում տեղի ունեցած մենամարտում երկրորդ միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, 33-ամյա բրիտանացի Կառլ Ֆրոչը միավորներով (117-111, 116-112, 114-114) հաղթեց 42-ամյա ամերիկացի Գլեն Ջոնսոնին: Այժմ եզրափակիչում Ֆրոչը պետք է մենամարտի WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Անդրե Ուորդի հետ, որը կիսաեզրափակիչում պարտության էր մատնել Արթուր Աբրահամին:

«Ուորդն օլիմպիական չեմպիոն է, շատ արագաշարժ ու տեխնիկապես լավ պատրաստված բռնցքամարտիկ է: Սակայն ես նրանից ավելի լավ մենամարտեցի Արթուր Աբրահամի հետ: Ուորդը չի տիրապետում նոկաուտի ենթարկող հարվածների, ուստի նրան դժվար կլինի ինձ հեռավորության վրա պահել: Մտադիր եմ գրոհել՝ օգտագործելով ֆիզիկական տվյալներս ու հարվածներիս ուժը, ճնշում գործադրել նրա վրա: Այդ մենամարտը կլինի համաշխարհային անուն ունեցող երկու բռնցքամարտիկների մրցավեճ, որում բացի WBC-ի եւ WBA-ի գոտիներից, կխաղարկվի նաեւ Super Six մրցաշարի հաղթողի տիտղոսը: Վստահ եմ, որ ինձ կհաջողվի հաղթել այդ մենամարտում», հայտարարել է Կառլ Ֆրոչը:

Անանդը գերազանցեց Շիրովին

Շախմատի աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդն ու Ալեքսեյ Շիրովն Իսպանիայի Լեոն քաղաքում 6 պարտիայից բաղկացած արագ շախմատի մրցախաղ անցկացրին: Մեծ առավելությամբ՝ 4,5-1,5 հաշվով մրցախաղը շահեց Անանդը: Նա տարավ 3 հաղթանակ, նույնքան պարտիա էլ ավարտեց ոչ-ոքի:

ԲՈՆՅՔԱՄԱՐՏ

Վանես Մարտիրոսյանը նվաճեց WBC-ի արծաթե գոտին

Պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի Վանես Մարտիրոսյանը բռնցքամարտիկի կարիերայում 30-րդ հաղթանակը տոնեց: Լոս Անջելոսում կայացած մենամարտում հայ բռնցքամարտիկը հաղթեց 30-ամյա մեքսիկացի Սաուլ Ռոմանին եւ նվաճեց առաջին միջինքաշային կարգում WBC-ի արծաթե գոտին:

25-ամյա Վանեսն ակտիվ սկսեց մենամարտը, սակայն անսպասելի հարված ընդունեց եւ առաջին ռաունդում հայտնվեց նոկդաունում: Հետագայում էլ մենամարտն անցավ Մարտիրոսյանի առավելությամբ: 7-րդ ռաունդում մի քանի հուժկու հարվածներից հետո մեքսիկացին հայտնվեց ռինգի հատակին, բայց կարողացավ վեր կենալ ու շարունակել մենամարտը: Սակայն հետեւեց հայ բռնցքամարտիկի նոր գրոհը եւ 7-րդ ռաունդի ավարտից 2 վայրկյան առաջ ռինգի մրցավարը դադարեցրեց մենամարտը: Վանեսին տեխնիկական նոկաուտով հաղթանակ շնորհվեց:

WBC-ի արծաթե գոտուն նվաճմամբ Վանեսն իրավունք ստացավ այդ վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկելու ներկայիս չեմպիոն, 21-ամյա մեքսիկացի Սաուլ Ալվարեսի հետ: Վերջինս հունիսի 18-ին պետք է իր տիտղոսի պարտադիր պաշտպանությունն իրականացնի բրիտանացի Ռայան Ռոուդսի հետ կայանալիք մենամարտում:

Վանես Մարտիրոսյանը հայտարարել է, որ ցանկանում է մրցել Ալվարեսի հետ, քանի որ այդ իրավունքը նվաճել է: Նա հույս է հայտնել, որ Ալվարեսը հաջորդ մենամարտը կանցկացնի իր հետ: Նշենք, որ Մարտիրոսյանն ու Ալվարեսը պրոմոութերական տարբեր կազմակերպություններ են ներկայացնում: Վերջերս այդ կազմակերպությունների միջեւ ծագած տարաձայնությունները հարթվել են, ուստի հնարավորություն է ստեղծվել մենամարտեր կազմակերպել:

Անվանի մարզիչ Ֆրեդի Ռոուչը գտնում է, որ իր սանը՝ Վանես Մարտիրոսյանը հեշտությամբ կհաղթի Ալվարեսին. «Բոլորը խոսում են այն մասին, թե որքան ուժեղ է Ալվարեսը: Կարծում եմ, որ Վանեսը նրանց ընդամենը մեկ ռաունդում նոկաուտի կենթարկի: Այն ժամանակ կտեսնենք, թե որքանով է ուժեղ Ալվարեսը»:

Հիշեցնենք, որ Վանես Մարտիրոսյանը, որի իսկական անունը Նորայր է, ծնվել է Աբովյանում 1986-ի մայիսի 1-ին: Ներկայումս նա բնակվում է Գլենդեյլում ու ներկայացնում է Top Rink պրոմոութերական ընկերությունը:

Հայ վետերան ֆուտբոլիստները 2-րդն են աշխարհում

Թաիլանդում ավարտված ֆուտբոլի աշխարհի վետերանների առաջնությունում հաջող հանդես եկավ Հայաստանի հավաքականը՝ դառնալով արծաթե մրցանակակիր: Մեր ընտրանին խմբային մրցաշարի վերջին խաղում 2-0 հաշվով պարտության մատնելով Շոտլանդիայի հավաքականին, 10 միավորով խմբում գրավեց առաջին տեղը ու մտավ եզրափակիչ: Վճռորոշ խաղում մեր վետերան ֆուտբոլիստները 0-3 հաշվով զիջեցին Իրանի հավաքականին:

Հիշեցնենք, որ Հայաստանի վետերանների հավաքականը գլխավորում էր խաղացող-մարզիչ Արմեն Սանամյանը: Թիմի կազմում հանդես եկան նախկինում հայտնի ֆուտբոլիստներ Տիգրան Եսայանը, Գագիկ Սիմոնյանը, Տիգրան Գսպեյանը, Լեւոն Ստեփանյանը, Բաբկեն Մելիքյանը, Սամվել Պողոսյանը, Գեւորգ Քամալյանը, Գուրգեն Ենգիբարյանն ու Աշոտ Ավետիսյանը:

Գոհարյանը խզեց պայմանագիրն «Իմպուլսի» հետ

«Իմպուլսի» ղեկավարության հետ փոխադարձ համաձայնությամբ Հովհաննես Գոհարյանը խզել է պայմանագիրն ակումբի հետ: Պատճառն արտերկրից ունեցած հրավերներն են: Մոտ օրերս պարզ կդառնա, թե արտերկրի որ ակումբում կշարունակի ելույթները Գոհարյանը:

Հովհաննես Գոհարյանը Հայաստանում ելույթները սկսել էր նախորդ մրցաշրջանի կեսերից՝ ԲԱՏԷ-ից վարձավճարով տեղափոխվելով «Փյունիկ»: Չեմպիոնի կազմում նա բավականին արդյունավետ խաղ ցուցադրեց՝ խփելով 7 գոլ: Մրցաշրջանի ավարտից հետո Գոհարյանը վերադարձավ ԲԱՏԷ, սակայն շուտով խզեց պայմանագիրն ու հայտնվեց «Իմպուլսում»: Դիլիջանցիների կազմում էլ նա աչքի ընկավ արդյունավետ խաղով՝ խփելով 4 գնդակ:

Մովսիսյանի խաղը հետաքրքրել է «Զենիթին»

Սանկտ Պետերբուրգում կայացած Ռուսաստան-Հայաստան խաղում Յուրա Մովսիսյանի ելույթն արժանացել է «Զենիթի» մարզիչների ուշադրությանը: Թիմն ագրեսիվ գործող հարձակվող է փնտրում, որը կընկերակցի Ալեքսանդր Կերժակովին: «Զենիթի» ղեկավարությունը մտադիր է ամռան տրանսֆերային շրջանում ձեռք բերել Յուրա Մովսիսյանին, որը ներկայումս հանդես է գալիս Կրասնոդարի համանուն թիմում:

Յուրա Մովսիսյանի տրանսֆերային արժեքը բարձր չէ, ընդամենը՝ 1,5 մլն եվրո, ինչը «Զենիթի» նման հարուստ ակումբի համար չնչին գումար է: Ակումբի ղեկավարությունը գտնում է, որ Մովսիսյանը խաղային իր ունակություններով չի զիջում Ալեքսանդր Բուխարովին:

Կիեւում տեղադրվել է Եվրո-2012-ի ժամացույցը

Կիեւի քաղաքապետարանի մոտակայքում տեղադրվել է Եվրո-2012-ի մեկնարկը խորհրդանշող ժամացույց: Մոնոլիթ հիմքով կոնստրուկցիայի ընդհանուր քաշը 13 տոննա է: Էկրանը տեղադրված է 3-մետրանոց հիմքի վրա: 8x2 մետր չափի ուղղանկյունաձեւ թվատախտակն այսօրվանից սկսած ցույց կտա, թե քանի օր, ժամ եւ րոպե է մնացել մինչեւ ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մեկնարկը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Քարերար Սամվել Կարապետյանի շուրջ երկու միլիոն դոլար նվիրատվությամբ Արցախի Մարտունի քաղաքում կլուծվի խմելու ջրի հարցը

«Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվո անդամ, «Տաշիր-Գրուպ» ընկերության նախագահ Սամվել Կարապետյանի նվիրաբերած միջոցներով, մինչեւ տարեվերջ կավարտվեն ԼՂՀ Մարտունի քաղաքի ջրամատակարարման 1-ին գոտու շինարարական աշխատանքները եւ քաղաքի բնակչության շուրջ երկու երրորդը կօգտվի ջրամատակարարման նոր համակարգից: Աշխատանքների 2-րդ եւ 3-րդ փուլերի ավարտին քաղաքն ամբողջությամբ կունենա բարելավված ջրամատակարարում:

Սա Արցախի ջրամատակարարման ոլորտում իրականացվող, թվով երկրորդ խոշոր ծրագիրն է, որ կյանքի է կոչվում մեծապես Սամվել Կարապետյանի եւ իր գլխավորած «Կարապետյան եղբայրներ» ընկերության նվիրատվությունների շնորհիվ: Առաջինը՝ Շուշի քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցումն է, որն իրականացվում է Ռուսաստանի հայ բարերարների նվիրաբերած միջոցներով, որտեղ առյուծի բաժինը կազմում է Կարապետյանի կատարած շուրջ մեկ միլիոն դոլար նվիրատվությունը:

Հիշեցնենք, որ Հեռուստամարաթոն 2008-ը գրանցեց Հիմնադրամի պատմության մեջ աննախադեպ ցուցանիշ՝ 35 միլիոն դոլար՝ շնորհիվ Սամվել Կարապետյանի 15 միլիոն դոլար նվիրատվության: Ստեփանակերտում այսօր արդեն կանգուն է Կարապետյանի նվերը արցախցիներին՝ հանրապետական հիվանդանոցը, որը հարդարման եւ կահավորման աշխատանքների ավարտից հետո կսպասարկի տարածաշրջանի բնակչությանը:

Երկու տարի շարունակ Մոսկվայում ՀՀ Նախագահի հրավերով տեղի ունեցող բարեգործական գալաճաշկերույթներին Սամվել Կարապետյանն ակտիվորեն մասնակցում է ոչ միայն որպես բարերար, այլ նաեւ որպես համահայկական համախմբումն ու Հիմնադրամի առաքելությունը բարձր գնահատող հայ գործարար մարդ, ով ջանք չի խնայում թե կազմակերպչական, թե ֆինանսական աջակցության առումներով իր նպաստը բերելու այս կարեւորագույն միջոցառմանը: Ըստ արժանվույն գնահատելով Սամվել Կարապետյանի վաստակը Հիմնադրամի պատմության մեջ՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը 2009թ. նիսանին նրան միաձայն հաստատեց նախագահության կազմում՝ որպես Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչ: Նա հանդիսանում է նաեւ Հիմնադրամի պատվո անդամ՝ կոչում, որին արժանանում են մեկ միլիոն դոլար եւ ավելի նվիրատվություն կատարած բարերարները:

Հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը համոզմունք է հայտնել. «Հիմնադրամի պատմության վերջին տարիներին Սամվել Կարապետյանն անուրանալի դերակատարում է ունեցել: Հայտնի է, որ նվիրատվությունների չափի առումով, վերջին երկու տարում Ռուսաստանն առաջատար է. այս փոփոխությունը մեծապես կապված է նաեւ Սամվել Կարապետյան բարերարի անվան հետ, ում վարքն օրինակելի է դարձել Ռուսաստանում աղրող բազմաթիվ հայ գործարարների համար»:

Սամվել Կարապետյանի գլխավորած «Կարապետյան եղբայրներ» ընկերությունը ներառում է ավելի քան երկու հարյուր գործարար կառույց, որտեղ աշխատում է շուրջ 30 հազար մարդ, որոնցից շատերը հայեր են: Նման խոշոր կառույցի ղեկավարումը կարող էր կլանել գործարար մարդու ողջ ժամանակը, բայց նրան հաջողվում է լինել եւ անգերազանցելի ձեռներեց, եւ ընտանիքի հոգատար հայր եւ հայրենիքի զարկերակը մշտապես զգացող մեծանուն հայորդի: Նրա հոգատարությունը զգացել են հազարավոր մարդիկ. այսօր դրանց թվին ավելացան նաեւ մարտունեցիները: Բարելավված ջրամատակարարում ստացած մարտունեցին անոթայման կօրհնի իր բարերարին ու կմաղթի ջրի նման երկար կյանք:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հունիսի 7-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը, գրանցեց Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի կողմից «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցումների վճարման» կանոններում (RL1-017) կատարված փոփոխությունը: Նոր փոփոխության էությունը կայանում է նրանում, որ պատահարում հետիոտնի մեղքի առկայությունը չի կարող հիմք համարվել նրան պատճառված անձնական վնասների հատուցումը մերժելու համար: Կանոնների փոփոխությունը միտված է ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում հետիոտների շահերի պաշտպանությանը եւ նպաստելու է համակարգի առավել արդարացի լինելուն: Կանոնների ինկորպորացված տարբերակը տեղադրված է Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում եւ ուժի մեջ կմտնի 2011 թ. հունիսի 17-ին:

Խորհուրդը որոշեց վերաձեւակերպել «ՍԱՆՌԱՅՍԵ ՍՊԸ-ի փոխանակման կետի արտարժույթի առուվաճառքի թիվ 739 լիցենզիան, «Ֆաստ Կրեդիտ» ՍՊԸ-ի եւ «Ոսկե Լումա» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման լիցենզիաները:

Գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրվեցին «Սառտե ՍՊԸ-ին, «ԻԶԻ ԿՐԵԴԻՏԵ ՍՊԸ-ին եւ «Գոլդ Քեե» ՍՊԸ-ին: «ՆՅՈՒ ԲՐԱՆԴ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման լիցենզիա սանձալու հայտը բավարարվեց վերապահումով: Ուժը կորցրած ճանաչվեց Օնիկ Մինասյան արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 492 լիցենզիան:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ՝ 8.5 տոկոս

2011 թ. հունիսի 7-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.5%:

2011 թ. մայիսին արձանագրվել է 0.04% գնաճ, որի արդյունքում 12-ամսյա գնաճն ավելացել է 0.1 տոկոսային կետով եւ կազմել 9.0%:

Խորհուրդն արձանագրեց, որ արտաքին հասվածից եկող գնաճային ճնշումներն առաջիկա ժամանակահատվածի համար մեղմվել են. հիմնական հումքային ապրանքների գները ամսվա սկզբին նվազել են՝ կայունանալով նախորդ ամսվա նկատմամբ համեմատաբար ցածր մակարդակներում, իսկ պարենային ապրանքների գները հարաբերականորեն կայուն են:

Խորհուրդը միակարծիք է, որ գնաճային միջավայրի վրա ներքին տնտեսությունից եկող ազդակները շարունակում են չեզոք լինել. աշխատանքի շուկայի թույլ գնաճային ճնշումները չեզոքացվում են մասնավոր ծախսումների դանդաղ աճով եւ հարկաբյուջետային քաղաքականության զսպող բնույթով:

Միեւնույն ժամանակ, ակնկալվում է նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքների արտադրության ծավալների աճի պայմաններում դրանց գների նվազում:

Խորհուրդը գնահատում է, որ գնաճային միջավայրի ընդլայնման հավանականությունը բավականին ցածր է եւ ֆինանսական շուկայում ձեւավորված տոկոսադրույքների միջոցով հնարավոր է առկա գնաճային միջավայրի զսպումը, ինչի արդյունքում կանխատեսվող ժամանակային հորիզոնում գնաճը կձեւավորվի 4%±1.5 տատանումների թույլատրելի միջակայքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸՇՁԲ -2/11

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել թարգմանչական ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար **բդեղեն (գրավոր եւ բանավոր) եւ լեհերեն(գրավոր) լեզուներով թարգմանչական ծառայությունների** ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժին (հեռ. 010 511-787) մինչեւ սույն 16.06.2011 թվականի ժամը 15.00:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«ԻԶԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՓԲԸ
2010 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2010	2009 աուդիտ անցած
	հազար դրամ	հազար դրամ
Արտադրանքի, ապրանքների եւ ծառայությունների իրացումից հասույթ	1,346,261	927,027
Իրացված արտադրանքի, ապրանքների եւ ծառայությունների ինքնարժեք	(1,042,953)	(734,505)
Համախառն շահույթ	303,308	192,522
Վարչական ծախսեր	(56,393)	(29,780)
Արտադրանքի, ապրանքների եւ ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	246,915	162,742
Գործառնական այլ եկամուտ	86,246	89,324
Գործառնական այլ ծախսեր	(101,455)	(96,388)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս	231,706	155,678
Ֆինանսական ծախսեր	5,943	5,439
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(88)	(1,375)
Զուտ շահույթ մինչեւ շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	225,675	148,864
Շահութահարկի գծով ծախս	(46,305)	(32,995)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	(179,370)	(115,869)

Բ. Սարգսյան
Տնօրեն

Ն. Ղուշչյան
Գլխավոր հաշվապահ

Հաշվապահական հաշվեկշիռ

«ԻԶԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՓԲԸ
2010 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	31.12.10	31.12.09 աուդիտ անցած
	հազար դրամ	հազար դրամ
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	525,052	493,416
Հիմնական միջոցներ	525,052	493,416
Ընթացիկ ակտիվներ		
Նյութեր	79,706	80,333
Արագամաշ առարկաներ	9,103	9,168
Տրված կանխավճարներ	35,581	6,344
Դեբիտորական պարտքեր		
վաճառքների գծով	147,209	66,952
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,270	1,948
Այլ դեբիտորական պարտքեր	18,200	-
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	48,559	15,119
Այլ ընթացիկ ակտիվներ	10,724	10,157
	350,352	190,021
Ընդամենը ակտիվներ	875,404	683,437
Սեփական կապիտալ եւ պարտավորություններ		
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	47,435	47,435
Վերագնահատումից եւ վերափոխումից արբերություններ	113,125	113,125
Կուտակված շահույթ	489,665	305,301
	650,225	465,861
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	4,015
	-	4,015
Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ բանկային վարկեր	-	
Կարճաժամկետ փոխառություններ	-	119,531
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	39,454	33,896
Ստացված ընթացիկ կանխավճարներ	126,173	-
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	21,915	32,711
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	4,706	6,589
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	18,793	12,270
Այլ կրեդիտորական պարտքեր	14,138	8,564
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	225,179	213,561
Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ	875,404	683,437

Բ. Սարգսյան
Տնօրեն

Ն. Ղուշչյան
Գլխավոր հաշվապահ

Աուդիտորական եզրակացություն

«ԻԶԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՓԲԸ

Մենք աուդիտի ենթարկել «ԻԶԵՎԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերության) հաշվապահական հաշվեկշիռը 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն աղբյուրների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ 31 դեկտեմբերի 2010 թ. դրությամբ, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ՀՀՀՀՍ-երի:

«ԱՎԱ- Աուդիտ Փարթներս» ՍՊԸ
Տնօրեն Ա. Պողոսյան
Աուդիտոր՝ Ա. Սիրեկանյան
ք. Երեւան
16 մայիս 2011 թ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: